



## ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

### Պատմական Թե՛ Ցուցադրական

Մինկափիլի մեջ կայացավ Միացեալ Նահանգներու նախագահ Տոնալտ Թրամփի եւ Հիւսիսային Քորեայի ղեկավար Քիմ Սան Ունի միջեւ հանդիպումը: Երկու երկիրներու ղեկավարներու մակարդակով անձախընթաց այս հանդիպումը Սպիտակ Տան շրջանակներուն կողմէ կոչուեցաւ պատմական, սակայն շատերու եզրակացութիւնը այն էր որ, հանդիպումը աւելի շատ ցուցադրական էր եւ կը ծառայէր երկու նախագահներու վարկանշի բարձրացման:

Թրամփ, որ տակաւին մի քանի ամիս առաջ վիրաւորանքներ կ'ունէր Սան Ունի հասցէին եւ կը սպառնար կործանել Հիւսիսային Քորեային, եթէ ան չդադրեցնէ իր միջուկային զենքերու ծրագիրը ու չյանձնէ ունեցած պաշարները, հանդիպման առաջին վայրկեանին իսկ «անձնատուր եղաւ», երբ ողջունելով գործընկերոջը ըսաւ՝ «պատիւ է Ձեզ հետ հանդիպիլը»:

Թրամփի այս արտայայտութիւնը, ուղղուած աշխարհի ամենէն փակ ու բռնապետական երկրի ղեկավարին, տարօրինակ թուեցաւ շատերուն: Տարբեր բան պէտք չէր ակնկալել Թրամփին, որ ունի խիստ սահմանափակ բառապաշար եւ կը խորհի որ, անձնական շոյանքով կարելի է միջազգային բարդ բանակցութիւնները վարել:

Նախքան հանդիպումը, միջուկային զենքերու յանձնումը նախապայման նկատող Ամերիկայի նախագահը, հանդիպումի աւարտին բաւարարուեցաւ ստորագրելով համաձայնութիւնը մը, ուր միայն անորոշ խօսքեր կային միջուկային զենքերու մասին:

Մասնագետներ այս առթիւ կը յիշեցնեն որ, նախագահներ Քլինթոնի եւ Պուլի օրով միջուկային զենքերու մասին շատ աւելի յստակ ձեւակերպուած համաձայնութիւններ գոյացած են, սակայն անոնք մնացած են թուղթի վրայ՝ առանց որ Հիւսիսային Քորեան կատարէ իր ստանձնած պարտաւորութիւնները:

Այս հանդիպումի միակ դրական կողմը նկատուեցաւ այն, որ կործանարար պատերազմի մասին սպառնալիքները վերացան ու աշխարհ կրնայ աւելի հանգիստ զգալ՝ ժամանակի մը համար:

Թրամփ, որ ամիս մը առաջ, առանց մտածելու իր առած քայլի հետեւանքներու մասին, չէղեալ համարեց նախագահ Օպամայի օրով Իրանի հետ կնքուած միջուկային համաձայնութիւնը, այժմ կը փորձէ համաձայնութեան գալ Հիւսիսային Քորեայի հետ:

Թրամփի ներքին ու արտաքին բոլոր քայլերը կը կրեն ցուցադրական բնոյթ, որոնք ապագային կրնան ծանր հետեւանքներ ունենալ Միացեալ Նահանգներու համար:

«ՄԱՍԻՍ»


## Փաշինեան. «Ամենակարեւոր Գործերէն Մէկը Մարտ 1-ի Ոճրագործութեան Բացայայտումն Է»

«Յատուկ Քննչական Մտաշուկութեան (ՀՔՄ) ամենակարեւոր անելիքներից մէկը Մարտի 1-ի ոճրագործութեան բացայայտումն է», - Յունիս 12-ին յայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը ծառայութեան նոր շահակուած պետ Սասուն Խաչատրեանը ներկայացնելու ընթացքին:

«Ամենակարեւոր գործերից մէկը, որ պէտք է իրականացնի ՀՔՄ-ն՝ Մարտի 1-ի ոճրագործութեան, սպանութիւնների բացայայտումն է: Ուզում եմ յստակ ասել, երբ մենք ասում ենք, որ չկան եւ գոյութիւն չունեն սահմանափակումներ՝ նկատի ունենք, որ չկան եւ գոյութիւն չունեն սահմանափակումներ: Եթէ նախկինում եղել են այնպիսի գործեր, որոնք ինչ-ինչ քաղաքական, մերձքաղաքական կամ այլ պատճառներով չեն գնացել առաջ, յոյս ունեմ, որ ՀՔՄ նոր պետի ղեկավարութեամբ քննիչները կ'անդրադառնան բոլոր այդ գործերին՝ Հայաստանում լիարժէք իրաւակարգ ապահովելու նպատակներից ելնելով»,- ըսած է վարչապետը:

Կառավարութեան ղեկավարի խօսքով, յաջորդ ամենակարեւոր գործառնությունը ընտրական յանցագործութիւններու հետ կապուած գործերն են եւ այս շրջանակը արդէն ցոյց կու տայ այն բացառիկ կարեւորութիւնը, որ ունի ՀՔՄ-ն մեր կեանքի մէջ եւ ընդհանրապէս իրաւակարգի ապահովման բնագաւառի մէջ:

«Ուզում եմ որպէս ՀՀ ժողովուրդի վստահութեամբ ՀՀ վարչապետ ընտրուած անձ յայտարարել



Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Յատուկ Քննչական Ծառայութեան պաշտօնեաներուն առջեւ

ընդհանրապէս, այն՝ ինչ յայտարարում ենք հրապարակային, դա այն է, ինչ կայ մեր մտքում: Երբ ասում ենք, որ օրէնքի առաջ բոլորը հաւասար են, նկատի ունենք, որ օրէնքի առաջ բոլորը հաւասար են, նկատի չունենք, որ ոմանք օրէնքի առաջ աւելի հաւասար են: Երբ ասում ենք, որ Հայաստանում պէտք է արմատախիլ արուի կողակցիան (կաշառակերութիւն) նկատի ունենք, որ Հայաստանից պէտք է արմատախիլ արուի կողակցիան, նկատի չունենք, որ որոշ տեղերում կողակցիա կարող է գոյութիւն ունենալ: Ուզում եմ յստակ ընդգծել, որ ՀՔՄ-ի առջեւ դրուած է այս ինդրի ապահովման հակառակ մասը եւ յոյս ունեմ, որ ծառայու

թիւնն կ'իրականացնի իր այդ գործառնությունը:

«Ուզում եմ նաեւ ի վերջոյ լուծել իմ եւ ՀՔՄ-ի յարաբերութիւններում առկայ մի փոքրիկ դրուագ: Կարծում եմ, որ ՀՔՄ քննիչների աշխատասենակներում ՀՀ որեւէ բարձրաստիճան պաշտօնյալի լուսանկար պէտք է չլինի, որովհետեւ ՀՔՄ-ն զբաղուած է այնպիսի գործերով, որոնցով կարող է աւելնալ իր ունենալ նաեւ այդպիսի պաշտօնեաների հետ: ՀՔՄ քննիչների սենեակներում պէտք է լինի ՀՀ զինանշանը, դրօշը եւ այս խորհրդանիշները պէտք է արտայայտեն այն գործառնությունը, որ իրականացնում է ՀՔՄ-ն», - ըսած է Նիկոլ Փաշինեան:

## Առաջին Հրաժարականը Փաշինեանի Կառավարութեան

Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Նանէ Թանդիլեան հրաժարական ներկայացուց Հայաստանի նոր կառավարութեան՝ յայտնելով իր անհամաձայնութիւնը պաշտօնեաներու աշխատաւարձերէն պարտադիր գումար պահելու որոշումին կապակցութեամբ:

«Դուք տեղեակ էք իմ դիրքորոշմանը, որը ես յայտնել եմ դեռ տարիներ առաջ՝ համակարգի պարտադիր բաղադրիչի վերաբերեալ: Նշանակուելով Աշխատանքի եւ ընկերային հարցերի նախարար, իմ դիրքորոշումը յայտնել եմ պարտադիր բաղադրիչի ամբողջական ներդրումը 1 տարով չետաձգելու եւ հանրային քննարկումների միջոցով համակարգը փոփոխելու տեսքով՝ շահառուների համար գրաւիչ տարբեր լուծումներ տալու, առանցքում ունենալով ազատ կամայայտնութեան սկզբունքը», գրած է Նանէ Թանդիլեան «Ֆէյսպուքի» իր էջին վրայ: «Երկար քննարկումներից չե-



Հրաժարեալ նախարարուհի Նանէ Թանդիլեան

տոյ պարզ դարձաւ, որ իմ առաջարկը չունի կառավարութեան աջակցութիւնը: Փոխարէնը առաջ քաշուեց այլ տարբերակ, որն էլ ներկայացուեց եւ հաստատուեց կառավարութեան նիստում:

«Այս հարցը սկզբունքային

## Շփման Գիծի Վրայ Նկատուած Են Հակառակորդի Կուտակումներ

Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը յայտնած է, որ վերջին օրերուն արցախա-ատրպէյճանական հակամարտ գործերու շփման գիծի տարբեր հատուածներու վրայ նկատուած են հակառակորդի զինթեխնիկայի եւ մարդկային ուժի աշխուժ տեղաշարժեր ու կուտակումներ:

ԱՀ ՊՆ մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութեան մէջ, մասնաւորապէս, նշուած է. «Վերջին շրջանում ատրպէյճանական կողմը նկատելի ակտիւութիւն (աշխուժութիւն) է դրսեւորում տեղեկատուական դաշտում, ինչն արտայայտուած է տարբեր թափանցիկ պատեղեկատուական հոսքերի եւ քարոզչական տեսանիւթերի առատութեամբ: Հիմնական նպատակ ունենալով ներքին ու արտաքին լսարանում «յաւուր պատշաճի»

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Բեկում Նախիջեւանում

ՅԱԿՈՐ ԲԱԴԱԼԵԱՆ

Պաշտպանութեան նախարարութիւնը կազմակերպել է մի շարք փորձագէտներու ու բլոգերներու այց Նախիջեւանի սահմանային դիրքեր, նրանց համար տեսանելի դարձնելով այն, ինչ իրականում տեղի է ունենում այնտեղ: Նախիջեւանի ուղղութեամբ ատորբայէճանական դիրքերի վերադասաւորումների մասին տեղեկութիւնները Հայաստանում սկսեցին շրջանառուել թաւշեայ յեղափոխութեան վճռորոշ փուլին զուգահեռ, յատկապէս նոր կառավարութեան ձեւաւորումից յետոյ:

Հաշուի առնելով այն, որ այդ տեղեկատուութիւնն աշխուժօրէն շրջանառում էին խմբեր, որոնք նախորդ իշխանութեան շրջանում նոյն ջանասիրութեամբ անում էին հակառակը՝ որեւէ այդօրինակ թեմա արծարծողին մեղադրում էին ատորբայէճանական քարոզչութեանը ծառայելու համար, թերեւս աներկբայ էր դառնում, որ նախիջեւանեան տեղեկութիւնների գեներացիայի նպատակը Հայաստանի նոր իշխանութեանը հարուածելն էր, ցոյց տալը, որ այդ իշխանութիւնը չի տիրապետում անվտանգութեան իրողութիւններին, ունակ չէ լուծել խնդիրները:

Պաշտպանութեան նախարարութեան կազմակերպած այցին մասնակից փորձագէտները, բլոգերները տեղադրել են լուսանկարներ եւ տեղեկատուութիւն իրավիճակի մասին, հաւաստիացնելով, որ հայկական կողմը լրիւ տիրապետում է իրադրութեանը, որ ատորբայէճանական դիրքերի շարժերը տեղի են ունեցել բացառապէս նրանց վերահսկողութեան տարածքում, գտնուում են հայկական դիրքերից լրիւ վերահսկելի տիրոջթում, եւ որեւէ տարածք կորցնելու մասին աղմուկը չի համապատասխանում իրականութեանը:

Նախիջեւանի պարագայում սակայն խնդիրը գտնուում է լրիւ վրէժն ալ տիրոջթում, քան զուտ դիրքային իրողութիւնները: Նախիջեւանն ունի առանձնապատուկ կարգավիճակ, թէ դէ իւրէ, թէ դէ ֆակտո: Ըստ այդմ, այդ ուղղութեամբ Ալիեւի գործողութիւնները չեն կարող դիտարկուել նոյն հարթութեան մէջ, ինչպէս Արցախի դիրքերի պարագայում:

Այստեղ իրադրութեան լարման դէպքում նախուսափելի ներգրաւուելու են թէ թուրքիան, թէ Ռուսաստանը, թէ ՀԱՊԿ: Ալիեւը անշուշտ չի կարող դա չգիտակցել: Ուրեմն ո՞րն է նրա մտադրութիւնը: Վերջին հաշուով անհրաժեշտ է արձանագրել, որ Նախիջեւանում նա աշխուժութիւն ցուցաբերում է արդէն մի քանի տարի: Աւելին, այդ ուղղութեամբ 2014 թուականին հայկական կողմը ունեցել է նաեւ զոհեր, ընդ որում, չհաստատուած տեղեկութիւններով՝ թուրքական վարձկանների մասնակցութեամբ միջադէպերի հետեւանքով: 2014 թուականին Նախիջեւանի սահմանի դիրքեր այցելեց նաեւ ՀԱՊԿ Գլխաւոր քարտուղարը:

Նախիջեւանում արդէն տեւական ժամանակ Ալիեւը ստեղծել է համագորային բանակ՝ թուրքիայի հետ, այդպիսով

թուրքիային տալով պաշտօնական ռազմական ներկայացուածութեան հնարաւորութիւն: Այդ հանգամանքով Ալիեւը եթէ չի նուազեցրել, ապա առնուազ հաւասարակշռել է իրանի ազդեցութիւնը, որը յետիորդային շրջանում բաւական մեծ է եղել Նախիջեւանում: Համագորային բանակի ստեղծումով Ալիեւը մեծացրել է թուրքական գործօնը եւ իրանի գործօնը նեղացրել զուտ տնտեսական շրջանակում:

Այդպիսով, Ալիեւը փոխել է Նախիջեւանի գործառութային նշանակութիւնը ռազմա-քաղաքական առումով, որովհետեւ իրանի ազդեցութիւնը լինելու էր զսպող, իսկ թուրքիայի դէպքում ամէն ինչ հակառակն է:

Այդպիսով Աատորբայէճանը փաստացի ստիպում է, որ Հայաստանը աւելի մեծ ռեսուրս կեդրոնացնի Նախիջեւանի ուղղութեամբ պաշտպանական խնդիրները սպասարկելու համար:

Այստեղ բանը յարձակման պատրաստուելը չէ: Յարձակողական, պատերազմական նպատակներն ու մտադրութիւնները դիրքերը առաջ կամ այս ու այն կողմ տալով չէ, որ Ալիեւը պէտք է արտայայտի: Ալիեւը մաներում է, ստիպելով Հայաստանին լարուել եւ ռեսուրսներ կեդրոնացնել նաեւ Նախիջեւանի ուղղութեամբ, այդպիսով առաջին հերթին ընդլայնելով ռեսուրսային պատերազմը, հայկական կողմին մաշեցնելու իր ռազմավարութեան տրամաբանութեամբ:

2016 թուականի ապրիլեան քառօրեան ցոյց տուեց, որ հայկական կողմը նոյնիսկ արցախեան ուղղութեամբ չի ապահովել անհրաժեշտ ռեսուրսային ամբողջութիւնը, ըստ այդմ աւելորդ է խօսել Նախիջեւանի ուղղութեան մասին: Այլ կերպ ասած, այստեղ խնդիրը ոչ թէ նոր, այլ նախորդ իշխանութեան ռազմավարական բացթողումն է: Նոր իշխանութեան վրայ է ընկել այդ խնդիրը, ինչպէս ընդհանրապէս նախորդ իշխանութեան թողած մեծ ու փոքր բոլոր ռազմա-քաղաքական, տնտեսական խնդիրները:

Միւս կողմից, նոր իշխանութիւնը իրաւունք չունի մտածել հնով «արդարանալու» մասին եւ ստիպուած է գտնել այդ խնդիրների, այդ թւում Նախիջեւանի ուղղութեամբ անհրաժեշտ պաշտպանական ռազմավարութեան լուծումները: Հայաստանն անշուշտ առաջնային ռեսուրսային լուծում պէտք է գտնի իր կարողութիւնների գեներացման միջոցով, սակայն աներկբայ է, որ բաւական չտակ եւ միարժէք պէտք է դրուի նաեւ դաշնակցային պարտաւորութիւն ունեցող սուբիեկտների պատասխանատուութեան հարցը: Յատկապէս ներկայիս իրավիճակում Ատրպէյճանը տուել է դրա առիթը Պուտինի հետ Նիկոլ Փաշինեանի նոր հանդիպմանն ընդառաջ, որ տեղի է ունենալու ֆուտպոլի աշխարհի առաջնութեան բացման արարողութեան առիթով Նիկոլ Փաշինեանի Մոսկուա այցի ընթացքում:

«ԼՐԱԳԻՐ»

Բակո Սահակեանը Զի Կրկնի Սերժ Սարգսեանի Միակը

ԿԱՐԻՆԵ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը Արցախի Հայաստանի հանրային հեռուստաընկերութիւններին տուած հարցազրոյցում յայտարարել է, որ 2020թ. կայանալիք Արցախի նախագահի համաժողովրդական ընտրութիւններին իր թեկնածութիւնը չի առաջադրելու:

«Ինչպէս գիտէք, 2017 թուականին մեր ժողովուրդը հանրաքուէի միջոցով ընդունեց նոր Սահմանադրութիւն, որով նախատեսուած է անցումային փուլ՝ երեք տարի ժամկէտով: Այդ ժամանակը նախատեսուած է նաեւ օրէնսդրական

ՀՀԿ-ն ու Սերժ Սարգսեանը այդպէս էլ չկարողացան ճիշտ պահին գտնել Սերժ Սարգսեանի իշխանութեան ժառանգորդին, արդիւնքում ստիպուած եղան իշխանութիւնը փոխանցել ժողովրդական յեղափոխութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեանին

րական դաշտը նոր Սահմանադրութեանը համապատասխանեցնելու համար: 2020 թուականին, գործող Սահմանադրութեան համաձայն, տեղի կ'ունենան Արցախի Հանրապետութեան նախագահի համաժողովրդական ընտրութիւններ: Ուզում եմ պաշտօնապէս յայտարարել, որ ես որպէս հանրապետութեան նախագահի թեկնածու չեմ մասնակցելու այդ ընտրութիւններին: Իմ մասնակցութիւնը կը լինի միայն որպէս Արցախի Հանրապետութեան քաղաքացի, ով ընտրուած է նոր նախագահ՝, - ասել է Բակո Սահակեանը:

Նա չաւելել է, որ սա ոչ թէ պահի թելադրանքով ընդունուած, այլ գիտակցուած որոշում է, որը բխում է արժէհամակարգից, ժողովրդավարական եւ քաղաքակիրթ երկիր կառուցելու հրամայականից: «Եւ քանի որ տեղի են ունենալու նախագահի եւ Ազգային ժողովի համաժամանակեայ ընտրութիւններ, ես՝ որպէս գործող նախագահ, օրէնքով սահմանուած իմ լիազօրութիւնների շրջանակում ձեռնարկելու եմ բոլոր անհրաժեշտ միջոցները, որպէսզի եւ՝ նախագահի, եւ՝ խորհրդարանական ընտրութիւններն անցնեն ազատ, արդար եւ թափանցիկ», - յայտարարել է Արցախի նախագահը:

Այսպիսով՝ Բակո Սահակեանը կայացրել է Արցախի ապագայի՝ իր նախագահական կենսագրութեան ամենավճռական ու կշռադատուած որոշումը: Այս քայլով Բակո Սահակեանը լուծում է միանգամից մի քանի կարեւոր խնդիր. նախ նա չհզոքացնում է Արցախում ներքաղաքական իրավիճակի խաթարման վտանգը, որը պատերազմական գոտում գտնուող երկրի համար հղի է կործանարար հետեւանքով: Երկրորդ՝ Բակո Սահակեանը դառնում է երաշխաւոր Արցախի ապագայ ընտրութիւնների համար, որը եւս պետութեան համար անչափ կարեւոր է: Այս ընթացքում Բակո Սահակեանը կարող է նաեւ հոգ տանել, որ իրենից

յետոյ իշխանութիւնն Արցախում փոխանցուի իր ժառանգորդին եւ իր հեռացումը պետութեան, ինչու չէ նաեւ իր թիմի համար ցնցումներ չառաջացնի. մի բան, որ չյաջողուեց անել Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանին:

Սարգսեանը, ինչպէս յայտնի, հրապարակաւ յայտարարել էր, որ 2018-ին չի յաւակնում դառնալ Աժ նախագահ, ՀՀ նախագահ, իսկ Սահմանադրութեան փոփոխութեան դէպքում՝ նաեւ ՀՀ վարչապետ: Յետագայում, երբ Սերժ Սարգսեանը որոշեց հրաժարուել իր նախկինում արուած յայտարարութիւնից, զրկուեց ոչ միայն իշխանութիւնից, այլ շատ

ծանր դրութեան մէջ դրեց սեփական թիմին:

ՀՀԿ-ն ու Սերժ Սարգսեանը այդպէս էլ չկարողացան ճիշտ պահին գտնել Սերժ Սարգսեանի իշխանութեան ժառանգորդին, արդիւնքում ստիպուած եղան իշխանութիւնը փոխանցել ժողովրդական յեղափոխութեան առաջնորդ Նիկոլ Փաշինեանին: Այս առումով Բակո Սահակեանը վստահաբար չի կրկնի Սերժ Սարգսեանի սխալները. Ստեփանակերտում շատ լաւ յետեւութիւն են արել երեւանեան իրադարձութիւններից:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՍԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԿԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ԿԱԴԵԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովը Հաւանութիւն Տուաւ ՀՀ Կառավարութեան Ծրագիրին



Հայաստանի Ազգային ժողովի նիստը՝ Կառավարութեան ծրագրի քննարկման ընթացքին

Ազգային ժողովը հաւանութեան արժանացուց Նիկոլ Փաշինեանի ղեկավարած Կառավարութեան ծրագիրը: Կողմ քուէարկեց 62, դէմ՝ 39 պատգամաւոր:

Յիշեցնենք, որ ԱԺ «Ելք», ՀՅԴ եւ «Ծառուկեան դաշինք խմբակցութիւնները յայտարարած էին, որ կողմ պիտի քուէարկեն նախագիծին, իսկ «ՀՀ» խմբակցութիւնը, թէեւ դէմ էր ծրագրին, յայտարարած էր, որ կ'ապահովէ անհրաժեշտ ձայները:

Յիշեցնենք, որ նոր կառավարութիւնը ձեւաւորուած է Հայաստան «Թաւաշ» յեղափոխութենէն յետոյ: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայացուցած ծրագիրը բաղկացած է 7 կէտէ՝ կառավարութեան գործունէութեան հիմնական ուղեւիշներ, արտահերթ խորհրդարանական ընտրութիւն-

ներու նախապատրաստում, արտաքին եւ ներքին անվտանգութեան ապահովում, պաշար կաշառակերութեան դէմ, ազատ, արժանապատիւ եւ երջանիկ քաղաքացի, տնտեսութեան շարունակական զարգացում եւ Հայաստան-սփիւռք կապեր:

«Կառավարութեան գործունէութեան հիմնական ուղեւիշները» բաժինի մէջ նշուած է, որ ՀՀ կառավարութեան գործունէութեան առանցքային նպատակը 2018թ. Ապրիլ-Մայիս ամիսներուն Հայաստանի մէջ տեղի ունեցած ոչ բռնի, թաւաշայ, ժողովրդական յեղափոխութեան արժէքներու ամրագրումն է՝ որպէս հանրային եւ ազգային յարաբերութիւններու հիմք եւ յեղափոխութեան զաղափարներու իրագործում՝ որպէս մշտական քաղաքական իրողութիւն:

Բակո Սահակեանի Յայտարարութիւնը «Նպատակ Ունի Կանխել Հայաստանեան Զարգացումներու Կրկնութիւնը»

Քաղաքական մեկնաբաններու կարծիքով, Լեւոնային Ղարաբաղի նախագահի պաշտօնին 2020 թուականին չառաջադրուելու մասին Բակո Սահակեանի յայտարարութիւնը նպատակ ունի կանխել Հայաստանեան զարգացումներու կրկնութիւնը Ղարաբաղի մէջ:

Ըստ Յակոբ Պատալեանի՝ Լեւոնային Ղարաբաղի իշխանութիւնները հասկցած են, որ փոփոխութիւններու չեղումը կը վտանգէ ոչ միայն սեփական դիրքերը, այլ նաեւ հակամարտութեան գործընթացին մէջ հայկական կողմի դիրքերը:

ԼՂ Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) աշխատակիցներու մասնակցութեամբ տասը օր առաջ Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած միջադէպէն ետք մեկնարկած բողոքի միջոցառումները յանգեցուցին ոչ միայն ԼՂ ԱԱԾ ու Ոստիկանութեան ղեկավարներու, այլ նաեւ Ղարաբաղի պետնախարարի հրաժարականին:

Լեւոնային Ղարաբաղի նախագահ Սահակեանը յայտարարած է, որ 2020-ի նախագահական ընտրութիւններուն ինքը պիտի չառաջադրուի. - «Ուզում եմ պաշտօնապէս յայտարարել, որ ես որպէս Հանրապետութեան նախագահի թեկնածու չեմ մասնակցելու այդ ընտրութիւններին: Իմ մասնակցութիւնը կը լինի միայն որպէս Արցախի հանրապետութեան քաղաքացի, ով ընտրուած է նոր նախագահ: Սա ոչ թէ պահի թե-



Նախագահ Բակո Սահակեան

լադրանքով ընդունուած, այլ գիտակցուած որոշում է, որը բխում է մեր արժեհամակարգից, ժողովրդավարական եւ քաղաքակիրթ երկիր կառուցելու հրամայականից: Եւ քանի որ տեղի են ունենալու նախագահի եւ Ազգային ժողովի համաժամանակեայ ընտրութիւններ, ես, որպէս գործող նախագահ, օրէնքով սահմանուած իմ լիազօրութիւնները շրջանակներում ձեռնարկելու եմ բոլոր անհրաժեշտ միջոցները, որպէսզի ե՛ւ նախագահի, ե՛ւ խորհրդարանական ընտրութիւններն անցնեն ազատ, արդար ու թափանցիկ»:

Յակոբ Պատալեանի կարծիքով, Բակո Սահակեանի յայտարարութեան պէտք է յաջորդեն իրական փոփոխութիւններ, հակառակ պարագային առկայ դժգոհութիւնը մեղմել դժուար կ'ըլլայ:

«Նորֆոլկ Քոնսալթինկ»-ի Տնօրէնը Երեք Միլիոն Տոլար Վերադարձուցած է Պետութեան



«Նորֆոլկ Քոնսալթինկ» ընկերութեան տնօրէն Արմէն Ունանեան իւրացուցած գումարներու յայտնաբերումէն ետք

«Նորֆոլկ Քոնսալթինկ» ընկերութեան տնօրէն Արմէն Ունանեան հանդէս եկաւ յայտարարութեամբ՝ ԱԱԾ բացառապատճեններու մասին, ընդունելով իր գործունէութեան ընթացքին հարկային օրէնսդրութեան խախտումներու փաստը եւ վճարելով երեք միլիոն տոլար:

«Ես՝ Արմէն Ունանեան, հանդիսանալով «Նորֆոլկ Քոնսալթինկ» ՍՊ ընկերութեան գլխաւոր տնօրէն, իմ եւ միւսներու նկատմամբ յարուցուած քրէական գործի վերաբերեալ յայտարարում եմ, որ ընդունում եմ մեր գործունէութեան ընթացքում հարկային օրէնսդրութեան խախտումների փաստը, ուստի իմ նախաձեռնութեամբ Յունիս 4-ին արդէն իսկ կատարել եմ 3 միլիոն ԱՄՆ տոլարի չափով վճարում, եւ 7-10 օրուայ ընթացքին պատրաստուած եմ կրկին կատարել 1,5 միլիոն տոլարի վճարում: Քրէական գործով հաշուարկուած վնասը ըստ նախնական հաշ-

ուարկի կազմել շուրջ 7 միլիոն ԱՄՆ տոլար: Քրէական գործի շրջանակներում նշանակուած հարկային ստուգման արդիւնքում հաշուարկուած վնասն ամբողջութեամբ՝ ներառեալ վճարուած հարկերի գումարը, իմ կողմից վճարուելու է հարկային ստուգման ընթացքում: Յանկանում եմ նաեւ նշել, որ ընկերութեան գոտւ շահույթն ի սկզբանէ նպատակ եմ ունեցել յանձնել պետութեանը, ինչն էլ իրականացնելու եմ համապատասխան հարկային ստուգումից յետոյ:

«Ներկայումս՝ իմ եւ իմ աշխատակիցների նկատմամբ կիրառուած խափանման միջոց կալանաւորումը փոխարինուել է չհեռանալու մասին ստորագրութեամբ: Իմ գնահատմամբ ՀՀ ԱԱԾ-ի գործողութիւնների արդիւնքում պահանջուել են իմ եւ իմ աշխատակիցների իրաւունքները», ըստած է «Նորֆոլկ Քոնսալթինկ» ընկերութեան տնօրէն Արմէն Ունանեանի յայտարարութեան մէջ:

Ազատ Արձակուած են «Սասնայ Ճոռեր»-ն Եւ Երկու Անդամ

Յունիս 8-ին Դատարանը կալանքէն ազատ արձակած է 2016-ին ոստիկանութեան ՊՊԾ գունդը զբաւեւրու համար մեղադրուող «Սասնայ ծռեր» խումբի եւս երկու անդամ՝ Տիգրան Սարգսեան եւ Յովհաննէս Վարդանեան:

Յունիս 7-ին դատարանը կալանքէն ազատ արձակած էր զինուած խումբի անդամ Արեգ Կիրեղեանը: Այսպիսով, 17 Յունիս 2016 թուականին ոստիկանական գունդը զբաւած խումբի երեք անդամ ազատ արձակուած են:

Տիգրան Սարգսեանն ու Յովհաննէս Վարդանեան ազատ արձակուած են դատարանի դահլիճէն՝ ստորագրութիւն տալով չհեռանալու մասին:

Դատաւոր Արտուր Գաբրիէլեանի որոշումը ծափերով ողջունած են «Սասնայ ծռերու» աջակիցները:

Լրագրողներու հետ զրոյցի ընթացքին Տիգրան Սարգսեանը, որ մեղադրուած էր երեք յօդուածներով՝ կազմակերպուած խումբի կողմէ պատանդ վերցնելու, գէնք չափշտակելու, ապօրինի կերպով գէնք գինամթերք պահելու եւ փոխադրելու համար, իր ազատ արձակումը պայմանաւորեց իշխանափոխութեամբ:

Տիգրան Սարգսեանէն ետք դատարանը քննեց Յովհաննէս Վարդանեանի խափանման միջոցի փոփոխման հարցը: Երկուքի պարա-

գային ալ անոնց պաշտպանները յայտարարած են՝ քանի որ քաղաքական իրադրութիւնը փոփոխուած է եւ քանի որ զինուած խումբի անդամները յայտարարած էին, որ դուրս եկած էին արդէն նախկին իշխանութեան դէմ, ապա նուազած է անոնց վերագրուող արարքի հասարակական վտանգաւորութեան բնոյթն ու աստիճանը, ուստի միայն այդ փաստարկը դնել կալանքի հարցին, հիմնաւոր չէ:

Միեւնոյն ժամանակ, պաշտպանները ըսած են՝ զինուած խումբի այս երկու անդամները առողջական խնդիրներ ունին:

Փաստաբան Անուշ Մխիթարեանգ - «Մինչեւ սոյն գործի աւարտը նա չի դրսեւորի այնպիսի վարքագիծ, որը հնարաւորութիւն կու տայ դատարանին զղջալու իր կողմից անձի նկատմամբ ընտրուած խափանման միջոցը փոխելու որոշում կայացնելու համար»:

Ազատ արձակուած «Սասնայ ծռերու» անդամները սակաւախօս էին: Յովհաննէս Վարդանեան ըսած է՝ քանի դեռ բոլոր ընկերները ազատ չեն արձակուած, որեւէ մեկնաբանութիւն պիտի չտայ:

Անոնց փաստաբան Գրիշա Բալասանեան լիչեցուցած է «Սասնայ ծռերու» վերջին յայտարարութիւնը, որու մէջ անոնք նշած են, որ փակած են զինուած պայքարի էջը:

ԼՈՒՐԵՐ

ԵՄ-ն կը Շարունակէ Աջակցութիւնը Հայաստանի Բարեփոխումներուն

2015 թուականի Յունուարէն ԵՄ-Հայաստան յարաբերութիւններու մէջ արձանագրուած է զգալի զարգացում: Այս միտքը արձանագրուած է Եւրոպական միութեան նոր գեկոյցի մէջ: Նշուած է, որ երկկողմ գործընկերութեան նոր համաձայնագրի շուրջ բանակցութիւններն ու պայմանական կիրարկման մէջ մտնելը, ինչպէս նաեւ «Գործընկերութեան առաջնահերթութիւններու» ամփոփումը, որ տեղի ունեցած է այս տարուան փետրուարին, նպաստած են այդ յաջողութեան, նշուած է Եւրոպական միութեան նոր գեկոյցի մէջ:

Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդլայնման հարցերով յանձնակատար Յովհաննէս Հասն ալ նշած է օղակնացութեան համաձայնագրի մասին. «Նոր Համաձայնագիրէն բացի, որ միաձայն վաւերացուած է Հայաստանի խորհրդարանի կողմէ եւ ներկայիս անցած է պայմանական կիրարկման, կը տեսնենք նաեւ առաջընթաց ընդհանուր օղակնացութեան համաձայնագրի նախատարադրման ու Տրանս Եւրոպական փոխադրամիջոցային ցանցի ընդլայնման միջոցով մեր քաղաքացիներուն աւելի մօտ դարձնելու առընչութեամբ: Հայաստանը աշխոյժ մասնակցութիւն ունեցաւ նաեւ անցեալ տարի Նոյեմբերին Պրիւսէի մէջ կայացած Արեւելեան գործընկերութեան գաղաթնագրովին, որու ընթացքին առաջնորդները հաւանութիւն տուին «20 արդիւնք 2020 թուականի համար» փաստաթուղթին, որ կը համալրէ մեր երկկողմ օրակարգի առաջնահերթութիւնները»:

«ԵՄ-Հայաստան Գործընկերութեան առաջնահերթութիւնները», որ ստորագրուած է 2018 թ. փետրուարին,

կը սահմանէ առանցքային ոլորտներու մէջ ապագայ երկկողմ եւ ֆինանսական համագործակցութեան ուղիները՝ ձեւաւորուած 2018թ Արեւելեան գործընկերութեան գաղաթնագրովին ընթացքին հաստատուած գերակայութիւններուն համահունչ:

Միակցուածութեան ոլորտի մէջ, 2017 թ. Նոյեմբերին նախատարադրուած է Հայաստանի եւ Եւրոպական միութեան միջեւ միասնական օղակնացութեան գօտիի ստեղծման մասին համաձայնագիրը: Այն կը նախատեսուի դէպի Հայաստան ուղեւորափոխադրումներու ծաւալի զգալի աճ, միաժամանակ ապահովելով անվտանգութեան, բնապահպանական եւ սոցիալական չափանիշներու կատարելագործում: Բացի այդ, Հայաստանը ստորագրած է բարձր մակարդակի փոխմբբունման փաստաթուղթ, որ կը սահմանէ Տրանս-Եւրոպական փոխադրամիջոցներու հիմնական ցանցերու քարտէզը:

Հայաստանը կը շարունակէ աշխոյժ մասնակցութիւնը Արեւելեան գործընկերութեան մէջ. 2017 թուականի 24 Նոյեմբերին Պրիւսէի մէջ կայացած Արեւելեան գործընկերութեան գաղաթնագրովին ընդունուած Հոչակագիրը կը վերահաստատէ Եւրոպական միութեան եւ 6 գործընկեր երկիրներու յանձնառութեան յստակ շարունակական բնոյթը: Գաղաթնագրովը հաւանութիւն տուած է 2020 թուականի 20 արդիւնքներուն, որոնք օգնեցին համագործակցութիւնը ուղղել շօշափելի, ինչպէս նաեւ ժողովուրդի համար օգուտներ ապահովող արդիւնքներու ձեռքբերման՝ Արեւելեան գործընկերութեան վերանայնուած բազմակողմ կառուցուածքին համահունչ:

«Թումո»-ն Կարող է Ողջ Աշխարհում Դառնալ Հայաստանի Կլորալ Պրէնտը. Վարչապետ



Նիկոլ Փաշինեան հանդիպումը «Թումո» կեդրոնի հիմնադիր Սէմ Սիմոնեանի հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաներու կեդրոնի հիմնադիր Սէմ Սիմոնեանը:

Չրուցակիցները քննարկած են «Թումո» կեդրոնի գործունէութեան, նոր նախաձեռնութիւններուն ու ծրագիրներուն առընչուող շարք մը հարցեր:

Վարչապետը կարեւորած է «Թումո»-ի գործունէութիւնը եւ ընդգծած, որ այն կրնայ ողջ աշխարհի մէջ դառնալ Հայաստանի կլոպալ պրէնտը (մակնիշ): Նիկոլ Փաշինեան նշած է, որ ՀՀ կառավարութիւնը պատրաստ է աջակցել Սէմ Սիմոնեանի գլխաւորած խումբի տարբեր ծրագիրներուն եւ նախաձեռնութիւններուն, որոնք ուղղ-

ուած են կրթութեան որակի բարձրացմանն ու երիտասարդ սերունդի զարգացման:

Պարոն Սիմոնեան ողջունած է վարչապետի ներկայացուցած գաղափարը եւ տեղեկացուցած, որ կը նախատեսեն «Թումո» կեդրոններ հիմնել Փարիզի, Մոսկուայի, Տիրանայի, Պէյրութի, ինչպէս նաեւ ՀՀ գիտութեան ուսերու տարբեր գործառններու մէջ: Այնուհետեւ Սէմ Սիմոնեան անդրադարձած է Բարձրագոյն կրթութեան միջբուհական կեդրոնի ստեղծման ծրագիրին, բարձրագոյն կրթութեան համակարգի մէջ բարեփոխումներու իրականացման վերաբերող այլ հարցերու եւ նախաձեռնութիւններու:

Հայաստանի եւ Ռուսիոյ ԱԳ Նախարարները Գոհ են Առաջին Հանդիպումէն



Զոհրապ Մնացականեան եւ Սերկէյ Լաւրովը Մոսկուայի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Ռուսիոյ արտգործնախարար Սերկէյ Լաւրովը գոհ է իր հայաստանցի գործընկեր Զոհրապ Մնացականեանի հետ առաջին բանակցութիւններէն: Համատեղ կարճատեւ ասուլիսին Լաւրովը յայտարարած է, որ այսուհետ եւս Ռուսիան պիտի շարունակէ զարգացնել Հայաստանի հետ ռազմավարական դաշնակցային յարաբերութիւնները:

Ռուսիոյ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ընդգծած է, որ այդ յարաբերութիւններու զարգացման կը նպաստէ նաեւ Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական տնտեսական միութեան ու Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան:

Զոհրապ Մնացականեանը նոյնպէս գոհունակութիւն յայտնած է առաջին հանդիպումէն:

Նախարարները խօսած են դարբաղեան խնդրի մասին: Լաւրովը շեշտած է, որ պաշտօնական

Մոսկուայի դիրքորոշումը դարբաղեան խնդրի շուրջ անփոփոխ է եւ համահունչ է ԵԱՀԿ Մինսկի խումբի դիրքորոշման, որու համանախագահն է Ռուսիան:

Հայ լրագրողներէն մէկն ալ Ռուսիոյ արտգործնախարարին հարցուցած է բանակցային գործընթացին Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան անհրաժեշտութեան մասին: Լաւրովը այս հարցին կարճ պատասխան տուած է. «Որոշ փուլերուն, ի դէպ, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները կը մասնակցէին այդ գործընթացին, չետոյ հայ եւ ատրպէյճանական կողմերու պայմանաւորուածութեան համաձայն բանակցութիւններու ձեւաչափը փոխուած էր: Եթէ կողմերը՝ Երեւանն ու Պաքուն, որոշեն, որ Ղարաբաղը կը վերադառնայ որպէս բանակցային կողմ, Ռուսիան կը սատարէ այդ որոշման, ինչպէս եւ Մինսկի խումբի միւս համանախագահները»:

ՄԱԿ-ի ԱՄՆ-ի Նախկին Դեսպան Սամանթա Փաուերը Այցելած է Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր



Սամանթա Փաուեր Ցեղասպանութեան թանգարան այցելութեան ընթացքին

ՄԱԿ-ի ԱՄՆ-ի նախկին դեսպան Սամանթա Փաուերը այցելած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

Սամանթա Փաուերը յարգած է Հայոց ցեղասպանութեան 1.5 միլիոն անմեղ զոհերու յիշատակը:

«Ես այնքան յուզուած եմ, որ վերջապէս կը գտնուիմ Հայաստան: Շնորհակալութիւն «Ավրորա» մրցանակին մարդասիրութեան գաղափարը առաջ մղելու համար եւ Երեւանի մէջ Ցեղասպանութեան թանգարանին՝ ձեր գործունէութեան համար, որ նուիրուած է

1915 թուականի ցեղասպանութեան 1.5 միլիոն զոհերուն», - գրած է ան իր միջբոլորգին մէջ:

Անոր խօսքով, մենք բաւականաչափ դժուար ժամանակահատուածի մէջ կ'ապրինք, այդ պատճառով «երբ կը հանդիպինք այնպիսի մարդոց, ինչպիսիք՝ «Ավրորա» մրցանակի դափնեկիրներն են, մենք կը գիտակցինք, որ պէտք է բոլորով միասին ընենք ամէն հնարաւորը այն բանի համար, որ վերհանենք այն, ինչ կ'ընեն հումանիտները:

### «Արորա» Մրցանակի Դափնեկիր Ծանչցուած է Չո Լա Աունը



«Արորա» մարդասիրական մրցանակի երրորդ դափնեկիրը իրաւաբան Չո Լա Աունը

«Արորա» մարդասիրական մրցանակի երրորդ դափնեկիրը դարձաւ Միանմայի մէջ Ռոհինկա ժողովուրդի իրաւունքներու համար պայքարող իրաւաբան եւ աշխոյժ գործիչ Չո Լա Աունը: Դափնեկիրի անունը յայտարարուեցաւ Յունիս 10-ի լուսաբացին՝ Խոր Վիրապի վանքին հարակից տարածքին մէջ:

115 երկիրներէ առաջադրուած 750 թեկնածուներէն այս տարուայ Արորայի դափնեկիր ընտրուած Չո Լա Աունը տասնամեակներ շարունակ իրաւապաշտպան գործունէութիւն ծաւալած է քաղաքացիութեան զրկուած իր Ռոհինկա ժողովուրդի իրաւունքներու համար: Միանմայի կառավարութեան կողմէ հետապնդող հարիւր հազարաւոր իսլամ փախստականներու եւ կրթութեան զրկուած երեխաներու իրաւունքներու համար պայքարելով՝ Չո Լա Աունը կեանքի 12 տարին անցուցած է բանտարկութեան մէջ: 1 միլիոն տոլար մրցանակը իրաւապաշտպանը պիտի ուղղէ մարդա-

սիրութեամբ զբաղող երեք կազմակերպութիւններու՝ անոնցմէ բացի ստանալով 100 հազար տոլարի պարգեւ:

«Արորա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիրներ, գործարարներ Նուպար Աֆէեանն ու Ռուբէն Վարդանեան «Ազատութեան» հարցին ի պատասխան ըսին, որ նախորդ երկու տարիներու համեմատութեամբ 2018-ին մրցանակաբաշխութեան ձեւաչափի փոփոխումը խորհրդանշական բնոյթ ունի:

«Արորայի» համահիմնադիր ռուսաստանաբնակ գործարար Ռուբէն Վարդանեան ընդգծած է, որ ամէն տարի դափնեկիրները կ'ընտրուին ոչ թէ իրենց անձնական որոշմամբ, այլ անկախ ընտրող հանձնաժողովի կողմէ: «Մեզ համար ինչ որ կապ կայ եւ ցեղասպանութիւնը Միանմարում ինչ որ ձեւով նման է... իրենք երեք միլիոն ազգութիւն էին ու հիմա մնացել է մի քանի հարիւր հազար մարդ, եւ ոչ մէկը չգիտի՝ իրենք ուր են կորել:

### Առաջին Զրաժարականը Կառավարութենէն

Շարունակուած էջ 1-էն

նշանակութիւն ունի ինձ համար: Պարտադիր բաղադրիչը չունէր եւ չունի հանրութեան աջակցութիւնը, եւ դրա պատճառները բազմաթիւ են ու բազմաշերտ: Այն ունի թէ՛ սոցիալական (ընկերային), թէ՛ իրաւական, թէ՛ քաղաքական, թէ՛ համակարգային խնդիրներ, եւ առանց հանրութեան հետ քննարկելու, խնդիրները բացայայտելու եւ միասնական եւ ընդունելի լուծումներ գտնելու, ես ճանապարհ չեմ տեսնում պարտադիր բաղադրիչի՝ ամբողջ ծաւալով ներդրման համար», աւելցուցած է հրաժարեալ նախարարուհին:

«Հաշուի առնելով այն հանգամանքը, որ կառավարութեան անդամ եմ դարձել որպէս «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան

անդամ, ես դադարեցնում եմ նաեւ կուսակցութեան անդամակցութիւնը», - գրած է Թանտիլեան:

Յունիս 11-ի կառավարութեան նիստի ընթացքին բուռն քննարկումներու որպէս արդիւնք ընդունուեցաւ «Կուսակալին կենսաթոշակներու մասին» փոփոխութիւններ կատարելու առաջարկը, որ պիտի ուղարկուի Ազգային ժողով: Ըստ այդ՝ այս տարուայ Յունիսէն սկսեալ 1974 թուականէն յետոյ ծնած քաղաքացիները պէտք է իրենց եկամուտներու 2,5 տոկոսը փոխանցեն այդ համակարգին:

«Դէմ եմ» նախաձեռնութեան ցուցարարները յայտարարած են, որ բողոքի ցոյցեր պիտի կազմակերպեն պարտադիր կուսակալին կենսաթոշակային համակարգի ընդունման դէմ:

### Հակառակորդի Կուսակցումներ

Շարունակուած էջ 1-էն

ներկայացնել սեփական գինուժի «ձեռքբերումները», պաշտօնական Պաքուն օրերս, նախ? շրջանառութեան մէջ դրեց նախիջեւանեան հատուածում իբր 11 հազար հեկտար տարածք ազատագրելու մասին անհիմն տեղե-

կութիւնը, իսկ այնուհետեւ համացանցում տեղադրեց «Պոլոնեզ» համազարկային կրակի ռեակտիվ (հակազգակ) համակարգերի ու իսրայէլական արտադրութեան LORA օպերատիվ (ազդու) մարտավարական հրթիռային համալիրների կիրառման տեսագրութիւնը»:

### Մարտի 1-ի Գործը «Սվադոդներից» Մէկն է Աղուան Յովսէփեանն է



Միասնիկ Մալխասեան

Աղուան Յովսէփեան

ԹԱԳՈՒՅԻ ՅԱԿՈՒԲԱՆ

2008թ. Մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւններից հաշուած օրեր անց, Մարտի 4-ին, Աժ գումարեց արտահերթ նիստ, որի օրակարգում «Աժ պատգամաւորներ Յակոբ Յակոբեանին, Միասնիկ Մալխասեանին, Սասուն Միքայէլեանին, Խաչատուր Սուքիասեանին որպէս մեղադրեալ ներգրաւելու եւ նրանց նկատմամբ կալանքը որպէս խափանման միջոց կիրառելու թոյլտուութիւն տալու վերաբերեալ ՀՀ գլխաւոր դատախազի միջնորդագրի մասին» հարցն էր: Աժ պատգամաւորներ Յակոբ Յակոբեանը, Միասնիկ Մալխասեանը, Սասուն Միքայէլեանը կալանաւորուեցին, ներգրաւուեցին որպէս մեղադրեալներ հանրայայտ «Եօթի գործով», իսկ Խաչատուր Սուքիասեանի եւ այն ժամանակ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր, այժմ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի նկատմամբ յայտարարուեց յետախուզում: Նրանց նկատմամբ Աժ-ն համաձայնեց յայտարարեց 2009թ. Յունիսին: Գլխաւոր դատախազն այն ժամանակ Աղուան Յովսէփեանն էր:

ուած է եղել եւ եղել է ԱԱԾ մեկուսարանում, Աղուան Յովսէփեանն այցելել է իրեն:

«Ես իրեն այն ժամանակ ասացի, որ ժամանակը դաշ, իրեն են բերելու այս մեկուսարան, եւ ինքն էլ կը գիտակցի, թէ ինչ է անում՝ մեզ այդ մեղադրանքը առաջադրելով: Անգամ այն ժամանակ իրենք հասկացան, որ դա անաւոր ծանր բեռ է եւ չէին կարողանում դուրս գալ այդ բեռան տակից: Եւ հարկադրուած մեր վրայից հանեցին ՀՀ քրէական օրէնսգրքի 300-րդ յօդվժուածով առաջադրուած մեղադրանքը, որպէսզի կարողանան հանել պետական յեղաշրջման մեղադրանքը: Իսկ յետոյ մեզ մեղադրանք առաջադրեցին ՀՀ քրէական օրէնսգրքի 225-րդ յօդուածով: Լիւնելով իր հայրենակիցը՝ ապարանցի, ինձ եւ Սասուն Միքայէլեանին էլ մի յօդուածով էլ աւելի էր մեղադրանք առաջադրել: Հիմա իրենց առաջադրած շինծու մեղադրանքներ համար, ես կարծում եմ, որ իրենք պէտք է պատասխանատուութիւն կրեն», - յիշում է մեր գրուցակիցը:

Յիշում է նաեւ, թէ ինչպէս է Աղուան Յովսէփեանը ԱԱԾ մեկուսարան այցելած ժամանակ իրեն եւ իր ընկերներին առաջարկել կնքել հաշտութիւն, ինչը տեղի չի ունեցել: «Այսօրուայ յաղթանակը նաեւ մեր պայքարի արդիւնքն է, մեր գրկանքներն իդուր շանցան, Նիկոլ Փաշինեանի շնորհիւ կարողացանք յաղթանակել: Երբ Նիկոլ Փաշինեանը ներկայացնում էր կառավարութեան ծրագիրը, ՀՀ-ականները ելոյթներ էին ունենում, չքմեղանում՝ մոռանալով, որ իրենք քննարկել ու վաւերացրել են պետական յանցագործութիւնը, պարետային ժամ են մտցրել եւ, առանց հիմքերի, քուէարկել են իրենց գործընկեր Աժ պատգամաւորներին կալանաւորելու օգտին: Իրենք բարոյական իրաւունք ունենալու խօսելու հանդուրժողականութիւնից», - հարցնում է նախկին քաղաքապետը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

# Մարդասիրություն Եւ Քարոզչություն Ի՞նչ Է Կատարուել Նախիջեւանի Սահմանին

Վերջին ամիսներին էապէս սրուել է իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանի Նախիջեւանի հատուածում: Ապրիլին ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութիւնը հաղորդեց, որ Ապրիլի 7-8-ի գիշերը նախիջեւանեան հատուածում ատրպէյճանական զինուած ուժերը մի քանի անգամ խախտել են հրադադարի ռեժիմը եւ կրակ արձակել հայկական զինուած ուժերի ուղղութեամբ: ՀՀ զինուած ուժերը պատասխան գործողութիւններով լուծեցին եւ հակառակորդին: Այս միջադէպից յետոյ հայ որոշ ռազմական փորձագէտներ կարծիք յայտնեցին, թէ ատրպէյճանական կողմը նման գործողութիւններով պատրաստուած է փակել դէպի Արցախ տանող երկու ճանապարհները՝ Վարդէնիս-Մարտակերտ եւ Երեւան-Գորիս-Ստեփանակերտ:



Իրավիճակի անտեղի լարումից եւ զգուշացնում են, որ որեւէ ապակայունացնող քայլ անպատասխան չի մնայ:»

## Ատրպէյճանը Բարելաւել Է Իր Դիրքերը Նախիջեւանում

Մայիսին ատրպէյճանական լրատուամիջոցները սկսեցին լուրեր շրջանառել այն մասին, որ ատրպէյճանական կողմը բարելաւել է իր դիրքերը Նախիջեւան-Հայաստան սահմանի հատուածում: Տարածուած լուրերի հիմնական աղբիւրը այն մտքերն էին, որոնք արտայայտել էր «Հետք» պարբերականի գլխավոր խմբագիր Էդիկ Բաղդասարեանը: Բաղդասարեանը խօսել էր ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտօնում 5-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Արտակ Դաւթեանի նշանակման մասին եւ զարմանք յայտնել, թէ ինչու է վարչապետ Նիկոլ Փաշինեանը հենց նրան ընտրել այդ պաշտօնի համար: Հայ-ատրպէյճանական սահմանի նախիջեւանեան հատուածի պաշտպանութիւնը իրականացնում է հենց 5-րդ բանակային կորպուսը, մինչդեռ Արտակ Դաւթեանը, Էդիկ Բաղդասարեանի խօսքերով, ձախողել է ծառայութիւնը այդ պաշտօնում, քանի որ ատրպէյճանացիները կարողացել են առաջ տանել իրենց դիրքերը չէզոք գոտում եւ վերահսկողութեան տակ առնել հակայական տարածքներ:

Ատրպէյճանացիները, բնականաբար, անմիջապէս օգտագործեցին այս յայտարարութիւնը իրենց քարոզչութեան օգտին: Haqqin.az կայքը յօդուած հրատարակեց հետեւեալ վերնագրով՝ «Ատրպէյճանական բանակը առաջ է շարժուել առաջնագծի նախիջեւանեան հատուածում»:

Մայիսի 18-ին ՀՀ Պաշտպանութեան եւ Արտաքին գործերի նորանշանակ նախարարներ Դաւիթ Տոնտեանը եւ Ջոհրաբ Մնացականեանը այցելեցին Հայաստանի հարաւ-արեւմտեան սահմանագիծ՝ Նախիջեւանի ուղղութիւն: Երկու օր անց ատրպէյճանական կողմը յայտարարեց, թէ իրենց կողմից գոհ է եղել փոխհրաձգութեան հետեւանքով: Հայկական կողմն իր հերթին յայտարարեց, որ «հայկական զինուած ուժերը զգուշացրել են, որ ինժեներական աշխատանքների ակտիւացումը, ինչպէս նաեւ այլ սադրիչ գործողութիւնները առաջացնում են փոխհրաձգութիւն եւ, որպէս հետեւանք՝ գոհեր: Հայկական զինուած ուժերը բազմիցս կոչ են արել զերծ մնալ

## Ատրպէյճանական Դիրքերի Տեղաշարժերը Մայիսին

Մայիս ամսին հայ-ատրպէյճանական սահմանի Նախիջեւանի հատուածում տեղի ունեցած տեղաշարժերը ուսումնասիրել է Ռազմինֆօ կայքը: Յօդուածում ներկայացրել են արբանեակային լուսանկարներ, որոնք ցոյց են տալիս Մայիս ամսուայ ընթացքում ատրպէյճանական դիրքերի տեղաշարժերը Նախիջեւանի հիւսիսարեւելեան հատուածում: Նշում է, որ ատրպէյճանական դիրքերն առաջ տանելու ուսումնասիրուած բոլոր դէպքերը նախկին Նախիջեւանի ինքնավար Խորհրդային Սոցիալիստական հանրապետութեան սահմաններում են (իմա՝ Նախիջեւանի տարածքում): Խօսքը միայն ու միայն որեւէ մէկի կողմից չվերահսկող բարձունքներում դիրքաւորուելու մասին է:

Ըստ ուսումնասիրութեան, Մայիսի 2-27 ժամանակամիջոցում Ատրպէյճանի զինուած ուժերը հիմնականում առաջացել են Արենի գիւղի այգիների եւ լքուած Գիւննութ գիւղի ուղղութիւններով: Առաջնալուծ Գիւննութի ուղղութեամբ՝ ատրպէյճանական կողմը կառուցել է 5 նոր ճանապարհ, որոնք ամենայն հավանականութեամբ տանում են դէպի նոր զբաղեցրած դիրքերը: Նախկինում այս հատուածում միջդիրքային տարածութիւնը 4.5-5 կմ էր, այժմ հայկական եւ ատրպէյճանական դիրքերի միջեւ հեռավորութիւնը կրճատուել է մինչեւ 750-1600 մետր: Իսկ հայկական կողմի դիրքերը, ըստ Ռազմինֆոյի, տեղակայուած են հենց լքուած Գիւննութ գիւղի տարածքում:

Մայիսի 17-ից յետոյ ատրպէյճանական կողմը ինժեներական աշխատանքներ է ձեռնարկել Արենի գիւղի ուղղութեամբ՝ նոր ճանապարհ բացելով դէպի արեւելք ու դիրքաւորուելով երկու հայկական դիրքերի միջեւ գտնուող բարձունքում: Ռազմինֆոն ընդգծում է, որ Արենի գիւղն իր մատուցներով բաւականին հեռու է ատրպէյճանական նոր դիրքերից եւ հրաձգային զէնքի համար գործնականում անհասանելի է:

## Մարդասիրություն Եւ Քարոզչություն

Իրադրութիւնը աւելի սրուեց Յունիսի սկզբին: Յունիսի 8-ին ատրպէյճանական լրատուամիջոցները, հղում անելով Նախիջեւանի ինքնավար Հանրապետութեան Առանձին համազորային բանակի մամուլի ծառայութեան հաղորդագրութեանը, գրեցին, թէ ատրպէյճանական բանակը 26 տարի անց կարողացել է վերահսկողութիւն սահմանել Նախիջեւանի Շարուրի շրջանի Գիւննութ (Չուննութ կամ Հունուտ) գյուղի նկատմամբ, որը «1992 թ. օկուպացուել էր հայկական զինուած խմբաւորումների կողմից»:

Կայքը, հղում անելով այդ նոյն Առանձին համազորային բանակի մամուլի ծառայութեանը, գրել է, թէ ատրպէյճանական կողմը վերականգնել է հսկողութիւնը Գիւննութ գիւղի եւ հարակից բարձունքների նկատմամբ:

Մինչդեռ հայկական կողմը բոլորովին այլ կերպ է ներկայացնում իրադարձութիւնները: Յունիսի 9-ին ՀՀ ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը Ֆէյսբուքի իր էջում տեղեկացրեց, որ ս. թ. Յունիսի 6-ին եւ 7-ին ատրպէյճանական կողմը դիմել է ՀՀ զինուած ուժերի հրամանատարութեանը՝ խնդրելով թոյլատրել որոշ քաղաքացիների մոտենալ Գիւննութ աւերակ բնակավայրի հարաւային արուարձանի գերեզմանատեղիներ: Արծրուն Յովհաննիսեանի տեղեկացմամբ՝ «հայկական կողմը, հաւատարիմ լինելով մարդասիրական նորմերին եւ մշտապէս կատարելով լարուածութեան թուլացման քայլեր, համաձայնել է թոյլատրել խաղաղ բնակիչներ կարճ ժամանակով մոտենալ գերեզմանատեղիին»:

Ստացուում է, որ ատրպէյճանական կողմը օգտուել է Հայաստանի մարդասիրական քայլից եւ փորձում է ցոյց տալ, թէ իբր ատրպէյճանական բանակը ազատագրել է Գիւննութ գիւղը, մինչդեռ մեզ հասանելի բոլոր քարտէսներում երեւում է, որ Գիւննութը այսպէս թէ այնպէս մտնում է

Նախիջեւանի սահմանների մէջ, պարզապէս հայկական կողմի զբաղեցրած մարտական դիրքերը թոյլ չեն տուել եւ թոյլ չեն տալիս ատրպէյճանացիներին մօտենալ աւերակ գիւղի տներին կամ գերեզմանատներին: Այդ պատճառով էլ ատրպէյճանական կողմը խնդրանքով դիմել է հայկական կողմին՝ միաժամանակ լրատուական դաշտում տարածելով կեղծ լուրեր, թէ իբր ատրպէյճանական բանակը Նախիջեւանի ուղղութեամբ 11 հազար հեկտար տարածք է ազատագրել, հնարաւորութիւն է ստացել նշանաւորութեան տակ պահելու Երեւան-Ստեփանակերտ ճանապարհը, նաեւ ստեղծել է 50 կմ նոր ինժեներական ենթակառուցուածքներ:

## ՀՀ ՊՆ-ն Հերքում Է

Մեկնաբանելով այս լուրերը՝ ՀՀ ՊՆ մամուլի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը վստահեցրել է, որ ատրպէյճանական կողմի պնդումներն իրականութեանը չեն համապատասխանում: Յովհաննիսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասել է, որ եթէ հողեր, գիւղեր, տարածքներ «ազատագրելու» մասին ատրպէյճանական պրոպագանդայի թուերն իրար գումարենք, ապա կը ստացուի, որ Ատրպէյճանը ողջ Անդրկովկասն է ազատագրել:


## Սերոնք Առաջուայ Պէս Գունուտ Սարի Գլխին Են

Մինչ այդ Արծրուն Յովհաննիսեանը նոր գրառում էր արել՝ խոստանալով բոլոր անհանգստացողների համար կազմակերպել այց Նախիջեւանի դիրքեր, որտեղից բոլոր ցանկացողները եւ լրատուամիջոցները կը կարողանան տեսնել Գիւննութի տեղը, որոշ դիրքեր եւ այլն:

Շուտով Միջազգային եւ անվտանգութեան հարցերով հայկական ինստիտուտի նախագահ, քաղաքագէտ Ստեփան Սաֆարեանը ֆէյսբուքեան իր էջում տեղեկացրեց, որ Յունիսի 10-ին ինքը ռազմական-քաղաքական մի խումբ փորձագէտների, բլոգերների եւ լրագրողների հետ, ՀՀ ՊՆ խօսնակ Արծրուն Յովհաննիսեանի եւ ՀՀ ՁՈՒ սպաների ուղեկցութեամբ այցելել են Հայաստան-Նախիջեւան սահմանային դիրքեր՝ տեղում ստուգելու ատրպէյճանական քարոզչամիջոցներով շրջանաւորութեան մէջ դրուած ապատեղեկատուութիւնը: Քաղաքագէտի խօսքերով՝ Հունուտ (Գիւննութ) սարի գլխին մեր՝ հայկական դիրքերն ու դիրքապահներն են՝ ինչպէս եղել է նախկինում, Հունուտ (Գիւննութ) լքուած գիւղը «մեր դիրքի տակ է» եւ ինչպէս նախկինում, այնպէս էլ այժմ անբնակ է, իսկ այն աւազի պարկերը, որոնք ատրպէյճանացիները կը ցանկանային վերածել կրակակէտերի, ուղիղ մեր դիրքապահների բռունցքի տակ են:

## ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄԻԱՒՈՐՈՒՄ

# Սեւախէտտոյն Տեմիրթաշի Հարցազրոյցը Էտիրնէի Բանտէն «Հայերը Տիրապէքիրի Հիւրերը Չեն, Այլ Տեղացիները»



## Հարցազրոյցը Վարեց՝ ՌԻՅԱՄ ԿԻԼԹԵՔԻՆ

Աննախաղէպներ կ'ապրուին Թուրքիոյ քաղաքական պատմութեան մէջ: 24 Յունիսին կայանալիք հանրապետութեան նախագահի ընտրութեան թեկնածուներէն մին բանտի մէջ է: Բանտախցիկէն կը տանի ընտրաշաւը: Փաստաբաններուն բանտարկութեան դէմ առարկութիւնը «խոյս տալու հաւանականութիւն ունի» պատճառաբանութեամբ՝ մերժուեցաւ դատարանին կողմէ:

Տեմիրթաշ 2014ի նախագահական ընտրութիւններուն եւս մասնակցած ու շուրջ 4 միլիոն ձայներ հաւաքած էր: 7 Յունիս 2015ին իր գլխաւորած ՀՏՓն ձայներուն 13 տոկոսը ստանալով՝ խորհրդարանին մէջ ունեցաւ 81 պատգամաւոր: Իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը իր հիմնադրութեան ի վեր առաջին անգամ գրկուեցաւ առանձին կառավարութիւն կազմելու առիթէն:

Տեմիրթաշ ձերբակալուեցաւ 4 Նոյեմբեր 2016ին:

Նախագահական թեկնածուն «Ակօս»ի հարցումներուն պատասխանեց խորհրդի բանտէն:

ՌԻՅԱՄ ԿԻԼԹԵՔԻՆ.- Ի՞նչ տպավորութիւններ եւ պատրաստուիլ ընտրութեան: Ինչպէ՞ս կ'անցնի ձեր առօրեան:

ՍԵՒԱՃԷՏՏԻՆ ՏԵՄԻՐԹԱՇ.- ՀՏՓ կուսակցութեան դէմ արդարադատութեան համակարգի ալ գործակցութեամբ կատարուող քաղաքական գործողութեան դրդապատճառը 7 Յունիս 2015ի ընտրութեան յաջողութիւնն է: Այդ թուականէն ցայսօր կուսակցութեան բազմահազար գործիչներ ձերբակալուեցան եւ դուրս բերուեցան քաղաքական մրցակցութենէն: Նմանապէս ես եւս քաղաքական նպատակներով պատանդ վերցուած եմ: Նման պայմաններու տակ նախագահութեան թեկնածութիւնը պատուի եւ պատասխանատուութեան խնդիր է: Դատարանին՝ ձերբակալութեան հանդէպ կայացուցած որոշումը ամօթալի խայտառակութիւն մըն է, որ երկար տարիներ պիտի լիշուի Թուրքիոյ քաղաքական

պատմութեան մէջ: Ի դէմ այդ ամօթի հեղինակներուն, մեծ եռանդով, ոգեւորութեամբ կ'աշխատիմ ընտրաշաւին գորակցելու համար: Խիստ խտացեալ աշխատութիւն մը կը պահանջեն բանտի գրկանքները:

ՌԻ.Կ.- Բանտի պայմաններուն մէջ ձեզի հանդէպ արդարադատութիւն կ'ունենա՞ն:

Ս.Տ.- Ո՛չ, ինձի հանդէպ յատուկ ճնշումներ չկան, բանտը ինքնին ճնշող միջավայր է արդէն:

ՌԻ.Կ.- Խիստ վիճելի էիմ 16 Ապրիլ 2016ի հանրաքուէի արդիւնքները: 24 Յունիսի արդիւնքներուն մասին հաւանակա՞նք եմ նման գեղծարարութիւններ:

Ս.Տ.- Այս մասին բոլոր կուսակցութիւնները, կամաւորներ եւ իրաւագէտներ պարտաւոր են կանխամիջոցներ ստեղծելու: Եթէ զանազան կուսակցութիւններէ 5 կամ 6 հակիչներու կողմէ հակուած ընտրատարածքի մը մէջ ժողովուրդի քուէները կը գողցուին, այս ոչ թէ գողերու ճարպիկութիւնը կ'ապացուցէ, այլ հակողներու անճարակութիւնը: Չհասկցա՞յ, մեր քուէները իշխող կուսակցութիւնը պիտի պաշտպանէ: Հետեւաբար բոլորը պէտք է իր քուէներուն պաշտպան ըլլան եւ ընտրութեան աւարտին ալ պատրուակներ չենրկայացնեն:

ՌԻ.Կ.- Կը սպասե՞իք այսքան կանուխ ընտրութիւն մը: Հանրապետական դաշինքը ինչո՞ւ այսքան անապարեց:

Ս.Տ.- Կ'ակնկալէինք, թէ ընտրութիւնը կը կատարուի Սեպտեմբեր կամ Հոկտեմբեր ամիսներուն: Կ'երեւի տնտեսական ճգնաժամը գիրենք պարտադրեց աւելի կանուխ թուականի մը: Հակառակ պարագային, երկրի տնտեսութիւնը կրնար կործանիլ: Այդ վտանգը տակաւին ալ առկայ է: Արդարութիւն եւ բարգաւաճում ու Ազգային շարժում կուսակցութիւններուն մէկտեղումով գոյացած Հանրապետական դաշինքը կանխահաս ընտրութեամբ կ'ուզէ ճգնաժամի ազդեցութիւնը նուազագոյն մակարդակի իջեցնել:

ՌԻ.Կ.- Ընտրութեան ետք ի՞նչ կ'ակնկալէք: Իշխող կուսակցութիւնը եթէ կորսնցնէ խորհրդարանի մէջ մեծամասնութիւնը, նոր կանխահաս ընտրութիւն մը հաւանակա՞նք է:

Ս.Տ.- Ամէն ինչ կարելի է: Ժողովրդավարական ուժերը պէտք է միշտ պատրաստ ըլլան քաղաքական պայքարի նոր հանգրուաններու: Նոր կանխահաս ընտրութիւնն ալ չեն կրնար փրկել դէպի անկումի գացող ԱԲԿ: Էրտողանի իշխանութեան պարտութիւնը անխուսափելի է: Բաւ է, որ մենք ամուր կատչինք պայքարին եւ յոյս ներշնչենք ժողովուրդին:

ՌԻ.Կ.- Ժողովուրդներու ժողովրդավարկան կուսակցութեան պատգամաւորներու ցանկերուն վրայ աչքի կ'իյնան ձախակողմեան անուններ: Դուք նախապէս տեսա՞՞ծ էիք ցանկերը: Առաջարկներ ունեցա՞ք: Մետիայի շրջափակումով հանդերձ, 7-յունիսեան տրամադրութիւնը կը նկատուի՞ք:

Ս.Տ.- Ի դէմ թերութիւններու կամ անբաւարարութիւններու առկայութեան, մեր կուսակցութիւնը կը ներկայանայ ամենաբազմերանգ եւ յուսադրիչ ցանկով: Նախապէս տեսած էի ցանկը, որուն համար միջամտութիւն մը չունեցայ: Եւ արդէն ժողովրդավարական սկզբունքներու առումով ճիշդ ալ չէր ըլլար նման միջամտութիւնը: Ոչ անուններու, բայց ընկալումներու առումով ցուցմունքներ ունեցայ: Յաջողութիւն կը մտայ մեր բոլոր թեկնածուներուն: Այս պայմաններուն մէջ, զուրկ եմ դուրսի տրամադրութիւնը զգալէ, բայց լսումներ կան 7 Յունիսի հոգեբանութեան

զարթնումի մասին: Յուսամ, որ այդպէս ալ ըլլայ:

ՌԻ.Կ.- Հաւանական է նաեւ, որ Էրտողան նախագահ ընտրուի եւ իշխող կուսակցութիւնը ալ խորհրդարանին մէջ ապահովէ ձայներու մեծամասնութիւնը: Նման զարգացումի դիմաց ի՞նչ հեռանկարներ ունիք:

Ս.Տ.- Ինչ որ ալ ըլլայ ընտրութեան արդիւնքը, մենք առանց քայլ մը իսկ նահանջելու կը շարունակենք մեր քաղաքական պայքարը:

ՌԻ.Կ.- Որպէս վերջին հարցում՝ կուսակցութիւնը կարո՞ւ Փայլանի թեկնածութիւնը առաջարկեց Տիրապէքիրէն: Դուք ինչպէ՞ս կը գնահատէք հայ պատգամաւորի մը Տիրապէքիրի թեկնածու ըլլալը:

Ս.Տ.- Կարծես Տիրապէքիրին, Տիրապէքիրն ալ կարողին շատ կը վախեն: Քաղաքի կեդրոնը անցեալին ունեցած է բազմամշակութային յատկութիւն: Այդ դիմագիծը պահպանուած է մինչեւ Հանրապետութեան առաջին տարիները: 1915ի Հայոց Ցեղասպանութենէն ետք քաղաքի այդ յատկութիւնը ցիրուցան եղաւ: Մինչեւ 1980ականները Տիրապէքիրի Սուր թաղամասին մէջ հայ ընտանիքներ կ'ապրէին: Ես իմ մանկութեան տարիներէս անգամ կը լիչեմ այս երեւոյթը: Բայց 80ական, 90ական թուականներու ճնշումի եւ տանջանքներու միջավայրին մէջ, այդ վերջին հայերն ալ ստիպուեցան իրենց հայրենի քաղաքը լքելու: Սա ինքնին ողբերգութիւն մըն էր: Հայերը Տիրապէքիրի հիւրերը չէին, այլ տեղացիներն էին: Կարոյի Տիրապէքիրի պատգամաւոր ըլլալը այդ վշտոտ պատմութեան փոխանցուած խիստ իմաստալի պատասխան մըն է:

Վստահ եմ, որ Տիրապէքիրի ժողովուրդը այս պատմական գիտակցութեամբ՝ գրկաբաց պիտի ընդունի Կարոյին: Իսկ Կարծես արդէն Տիրապէքիրի համար օտար մէկը չէ: Կը հաւատամ, որ տեղուցի երիտասարդութեան հետ շատ լաւ յարաբերութիւններ պիտի ունենայ եւ լաւագոյն կերպով պիտի ներկայացնէ իր կուսակցութիւնը: Յաջողութիւններ կը մտայ մեր իրեն: «ԱԿՕՍ»

**ARMENIA POST VELVET REVOLUTION**

**GUEST SPEAKER DR. HAMPIG SARAFIAN**  
CHAIR OF THE SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY CENTRAL COMMITTEE

**MONDAY, JUNE 18, 2018**  
**@ 6:30 P.M.**

**WOODWARD PARK REGIONAL LIBRARY**  
**944 E. PERRIN, FRESNO, CA**

Dr. Sarafian will discuss what led to Armenia's "Velvet Revolution," and what short-term and long-term changes are needed to position Armenia towards a democratic and prosperous future.

The program is organized by the Armenian Cultural Conservancy and the Armenian Council of America.

Ձեր Ծանուցումները  
Վստահեցէք  
«Մասիս»  
Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680  
massis2@earthlink.net

# Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Հիմնադրութեան 100-Ամեակի Յորելենական Ծաշկերոյթ Լիբանանի Մէջ



Գեղեցիկ զուգարդիպութեամբ մը, Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակման հարիւրամեակի օրերուն կը նշուի նաեւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) մէկ դարեայ Աստուածահաճոյ նուաճումը: Այս առթիւ տօնակատարութիւններու շարքը սկսաւ Ամերիկայի Արեւելեան Ափէն, հասնելու Սիտնի, Թորոնթօ, Պէյրութ, շարունակուելով Փարիզի եւ Երեւանի մէջ, հուսկ Ամերիկայի Արեւմտեան ափը:

Հինգշաբթի, 31 Մայիս 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Ֆէնիսիա» հիւրանոցի սրահին մէջ, տեղի ունեցաւ ԱՀԱԸ-ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած ճաշկերոյթը՝ կազմակերպութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան (ՄԱՀԱԵՄ): Ծաշկերոյթը առիթ մը եղաւ, որ աւելի քան 220 անհատներ Լիբանանէն, Ամերիկա-

ար ծան Սաղըրեան, ապա Վեր. Նշան Պագարեան աղօթքի հրաւիրեց բոլոր ներկայները:

Դր. Տազսեան շնորհակալութիւն յայտնեց Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան որ այս տարի եւս նիւթաբարոյապէս աջակցեցաւ այս գիտաժողովին իրականացման, աւելցնելով, որ «խորքին մէջ, զրեթէ անկարելի էր երեւակայել նկատի առնելով դիմագրաւուած նիւթական դժուարութիւնները՝ այս գիտաժողովին կայացումը՝ առանց Կիւլպենկեան Հիմնարկութեան ամուր եւ վճարական թիկունքին»:

Վեր. Դր. Փօլ Հայաստութեան բարիգալուստ մաղթելէ ետք արտասահմանէն ժամանած հիւրերուն եւ լիբանահայ ներկաներուն, ըսաւ. «Անգամ մը եւս, Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը մեզ կը հաւաքէ իր փեթակին շուրջ ծանօթանալու, վերջիշելու, կամ ուսումնասիրելու նոր տարածաշրջան մը ուր երկար տասնամեակներ շարունակ հայուն զարկերակը իր հիմնադիր ու ստեղծարար ազգեցութիւնը ունեցած է սփիւռքեան կեանքին վրայ տեղական սահմաններէն շատ անդին: Ասոր մէկ նմուշը տեսանք աւելի քան ամիս մը առաջ Գահիրէի մէջ, ուր վայելցնիք գաղութի Առաջնորդարանին, միութիւններու եւ անձնաւորութիւններու հիւրընկալութիւնն ու մտաւորական եւ ազգային ներդրումը: Մեր տարիներու գիտաժողովները կազմակերպուած են պատմութեան, քաղաքականութեան, աշխարհագրութեան, ժողովրդագրութեան, տնտեսագիտութեան, սփիւռքագիտութեան, լեզուաբանութեան եւ արուեստներու ուսումնասիրութեան մարզերու եւ անոնց հանդիպման կէտերու սերտորոշութեան նպատակով: Մեր լսած զեկուցումներու մէջ թերեւս նուազ շեշտ դրուած է հոգեբանութեան, աստուածաբանութեան եւ մարդաբանութեան մարզերուն վրայ: Հոն ուր երկու հայ գիտաժողովի համար կը հաւաքուի, հոն կը ծնի նոր հայկական յուշահանդէս մը, պատ-

մութիւն մը, ազգային նիւթերու թունկէս մը, ներուժ մը: Իսկ երբ երկու հայ Հայկազեանի մէջ հանդիպին, անոնց փորձառութիւնը կը համեմուրի տեղական ու օտար անձնաւորութիւններու եւ մշակուած մտքերու իւրայատուկ հարստութեամբ մը»:

Վեր. Հայաստութեան գնահատեց Կեդրոնին եւ աշխատակիցներուն ազնիւ ջանքերը, երախտագիտութիւն յայտնեց Կիւլպենկեան Հիմնարկի Հայկական Բաժնին, եւ բոլոր ներկաներուն՝ իրենց գործօն մասնակցութեան համար եւ բարեմաղթեց, որ «այս գիտաժողովը ըլլայ օրհնաբեր, շինիչ եւ կողմնորոշուած դէպի ամուր ապագայ»:

Ապա խոհուն վերլուծութեամբ մը, Արմինիոն Նեշընլ Ինսթիթիւթի (ANI) տնօրէն, վաստակաշատ ցեղասպանագէտ Դոկտ. Ռուբէն Ատալեան՝ «By the Nile and the sea, the currents and tides of modernity and the role of the Armenian Diaspora of Northeast Africa» վերնագրեալ դասախօսութեամբ բացառիկ խորութեամբ եւ վերլուծումով ներկայացուց Ափրիկէի վերջին երկու դարերու քաղաքատնտեսական եւ ընկերամշակութային համառօտ համապատկերը: Ան խորացաւ Ափրիկեան եղջիւրի շրջանին վերկայացումներուն, արդիականացման ներքին եւ արտաքին գործօններու շփումներէն յառաջացած ուժականութեան ու այդ՝ թոհոբոսիին մէջ շրջանի ժողովուրդներուն, հայ փոքրամասնութեան, պետական դէմքերու հակադարձութիւններուն ու կրած ազդեցութիւններուն: Քարոտներով, փաստաթղթային լուսանկարներով ներկայացուած այս դասախօսութիւնը յառաջացուց այն ենթահոդն ու միջավայրը, ուր լուսաբանուեցան յաջորդող 26 զեկուցները:

Գումարուեցան եօթ նիստեր, որոնց ընթացքին զեկուցեցին Ֆրանսային, Մ. Նահանգներէն, Հայաստանի Հանրապետութենէն, Եգիպտոսէն, Եթովպիայէն, Շուէտիէն, Գերմանիայէն եւ Միացեալ Թագաւորութենէն ժամանած փորձագէտներ ու մասնագէտներ: Զեկուցները խմբաւորուած էին ըստ բնագաւառներու. - 1) Պատմութիւն մինչեւ ի. դարասկիզբ 2) Գեղասպանութիւն, Նպաստամատոց եւ Պետութիւն 3) Եգիպտահայութիւնը 1940-80ականներուն 4) Երիտասարդութիւն, Ինքնութիւն, Եգիպտահայութիւնը Այսօր 5) Կրթութիւն եւ ժառանգ 6) Սուտանի Հայօճախը, 7) Եթովպիոյ Հայօճախը:

Հայրենի երիտասարդ պատմաբան Վահէ Սարգսեան լուսարձակի տակ առաւ Հայ-եգիպտական հնագոյն կապերը հիմնուելով Վանի, Կարմիր Բլուրի, եւ Մեծամօրի մէջ պեղուած եգիպտական գտածոներու վրայ: Փրոֆ. Քլոտ Մութաֆեան բացառապէս վերին Եգիպտոսի Սպիտակ Վանքի որմնանկարներուն հայկականութիւնը, որմնանկարիչին անունն ու ժամանակը: Շուէտի արքայական թանգարանի աշխատակից Անն Կրոնհամար ներկայացուց Եգիպտոսի խալի նուիրակ եգիպտահայ Օհան Տեմիրճեանի շուէտական գործունէութիւնը եւ իբրեւ Շուէտի Թագաւորի ներկայացուցիչ՝ Եգիպտոսի մէջ անոր գործունէութիւնը: ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Հիմնարկի տնօրէն Դոկտ. Վարդան Դեւրիկեան ըրաւ պատմական եգիպտահայ թեմին, գաջն բաժնելով չորս հանգրուաններու: Եգիպտահայ պատմաբան Արմին Քրէտեան վերլուծեց Գահիրէի հայոց 1906ի եւ Աղեքսանդրիոյ հայոց 1911ի մարդահամարներուն տուեանները, ահագանգելով նաեւ արխիւային նիւթերու հանդէպ առկայ անհոգ վերաբերումը: Քալիֆորնիոյ Նորթրիճ Համալսարանի Տնօրէն ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանումնքի հայագիտութեան բաժնի տնօրէն Դոկտ. Վահրամ Շեմմասեան ներկայացուց Փորթ Սալիտի գաղթականների հիմնումը եւ նկարագրեց գաղթականներուն կեանքը՝ անոնց այնտեղ կեցութեան շուրջ չորս տարիներուն ընթացքին: Փրոֆ. Հիլմար Քայզեր լուսարձակի տակ առաւ Գրիկէի (Գրիգոր Կերկէրեան) ուղենշային ուսումնասիրութիւնները՝ Հայոց Ցեղասպանութեան մասին եւ առարկեց որ ցեղասպանագիտութիւնը միայն վերջերս հասաւ վերլուծական այն մակարդակին, որուն առաջին քայլերը առած էր Գրիկէրը: Մինչը թափաչի Համալսարանի դասախօս Փրոֆ. Ճոն Արմաճանին վերլուծեց Եգիպտոսի սահմանադրութիւններուն տրամադրութիւնները՝ փոքրամասնութեանց եւ մարդկային իրաւանց հանդէպ: Ան ընդգծեց անոնց ունեցած ազդեցութիւնը Եգիպտոսի հայօճախին վրայ: Եգիպտահայ մտաւորական Հայկ Աւագեանի Արեւօրաթերթին մէջ Վահան Թէքէեանի լոյս ընծայած յօդուածներուն վերլուծութեան ու անոնց բովանդակական յարուան ընթացքին խնդրով խորաթափանց եւ արդիական ուսումնասիրութիւնը կարգաց Դոկտ. Մարուշ Երամեանը: Դոկտ. Գէորգ Եագրճեան ընդհանուր աժեւորում մը կատարեց եգիպտահայութեան վերաբերող խորհրդային արխիւներու գաղտնի փաստաթուղթերուն: Փրոֆեսոր Վերժինէ Սվազլեանի եգիպտահայ հայրենադարձներու՝ Հայաստանին ունեցած նպաստին համապարփակ յօդուածը կարգաց Դոկտ. Եագրճեան ի բացակայութեան Փրոֆ. Սվազլեանի:

Հայաստանի Ազգային Արխիւի վաստակաւոր հետազօտող Գոհար Աւագեան ծանրացաւ աւելի Գահիրէի Հայոց Առաջնորդարանի արխիւին նիւթերուն վրայ, նաեւ ընդգծեց ընդհանրապէս սփիւռքահայ արխիւներու կարեւորութիւնը:

### Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Շարունակուած էջ 14-էն

Հայագիտական մերօրեայ պրպտումներուն համար: Նորավանք Գիտակրթական Կեդրոնի գիտական քարտուղար Վահրամ Հովեան տուաւ պատկերը Եգիպտոսի հայ համայնքի մերօրեայ լրատուամիջոցներուն վիճակին, բովանդակութեան, առաքելութեան, եւ գնահատականը կատարեց համացանցի վրայ անոնց ներկայութեան: Լիմի Չոլաբեան-Խոնկանեան ներկայացուց Եգիպտոսի Հայ Աւետարանական Համայնքը՝ անդրադառնալով Ի. դարասկիզբի անոր կազմաւորման եւ Աղեքսանդրիոյ մէջ համայնքի

վիճակը նաեւ Սփիւռքի շարք մը այլ հայօճախներուն հայտնութեան: Շահեկան էր երիտասարդ եգիպտահայ Ասիէ ճիզմէճեանին նիւթը. ան քննարկեց ինքնութեան մտային թէ արուեստի ընկալման երեսակները՝ Եգիպտոսի հայօճախին մէջ: Նախկին հալչպահայ, ներկայիս եգիպտահայ ուսուցչուհի եւ հայերէնի դասախօս Դր. Երամեան բարձրաձայնեց եւ տեսականացուց արեւմտահայերէնի ուսուցման խնդիրները՝ եգիպտահայ դպրոցին մէջ: Անոր ի պատասխան Հայկազեան Համալսարանի դասախօս, կրթական մշակ Շաղիկ Խիւտավերտեան համեմատական գուգահեռներ գծեց



ներկայ իրավիճակին: Եգիպտահայ թովմաս Ջաքարեան՝ իբրեւ անդամը Երիտասարդ Հայի նմանակ եգիպտական Հոկտեմբեր պարբերականի խմբագրակազմին, ներկայացուց Հոկտեմբերը, անոր գաղափարախօսական երակէտերը, անոր ձեռնարկող երիտասարդներուն մտահոգութիւնները: Իսկ ժիրայր Դանիէլեան հակիրճ ներկայացուց Հոկտեմբերի պէյրութեան տարբերակ Երիտասարդ Հայը: Երկու ելոյթները գուգահեռներ գծեցին եւ ի յայտ բերին հայօճախներու մէջ երիտասարդ, նորարար, ըմբոստացող ալիքներուն իրարմէ անկախ եւ անջատ գոյութեան մը փաստը: Շահեկան էր սփիւռքագէտ, միջազգային համբաւի տիրացած Diaspora պարբերականի խմբագրակազմի անդամ Դոկտ. Սօսի Գասպարեանի յառաջ քաշած տեսութիւնը. ան եգիպտահայերը նկատեց լուռ աշխարհաքաղաքայիններ՝ ժամանակակից Եգիպտոսի մէջ: Քննարկումներուն ընթացքին Դոկտ. Գասպարեանի այս տեսութիւնը նկատուեցաւ ընդհանրական

լիբանահայ դպրոցին առնչութեամբ եւ տուաւ անոր տեղին, դերին եւ բնոյթին հաւատամքը: Համալսարանական հայ ուսանողութեան եգիպտահայ համապատկերը ներկայացուց երիտասարդ հետազօտող, եգիպտահայ Այդ Ջաքարեան: Եգիպտահայ համալսարանական ուսանողութեան ուսումնական տուեալներուն հասանելիութիւնը առիթ տուած է Ջաքարեանի որ կատարէ նման հայագիտականօրէն հագուադէպ (թերեւս իր բնոյթով՝ առաջինը) ուսումնասիրութիւն: Ճարտարագէտ, Դր. Նայիրի Համբիկեան լուսարձակը բեւեռեց Սփիւռքի շինարարական ժառանգին վրայ, եւ մեկնելով եգիպտահայ փորձէն (ուր եգիպտահայ պատկան իշխանութիւնները գործնապէս լծուած են վերականգնել եգիպտահայ անցեալի ժառանգը) ան նկարագրեց եգիպտահայ առկայ հնագոյն գերեզմանատան վերականգնումի եւ բարեկարգումի աշխատանքները: Համբիկեան ընդգծեց, որ սփիւռքահայ աւանդը Մար Մինայի գերեզմանատունով կարե-

լի է դրսեւորել նաեւ շինարարական թէ շոշափելի փաստերով: Դր. Համբիկեան նաեւ շահեկան տեսաբանական դրոյթ մը ներկայացուց սփիւռքահայ աւանդին ու ժառանգին մասին: Փրոֆ. Արմաճանի ներկայացուց Հիւսիսային Սուտանի եւ Եթովպիոյ սահմանադրութիւններուն տրամադրութիւնները՝ փոքրամասնութեանց եւ մարդկային իրաւանց հանդէպ, ու ընդգծեց անոնց ունեցած ազդեցութիւնը Եթովպիոյ եւ Սուտանի հայօճախին վրայ: Երիտասարդ արխիւագէտ Աննա Աւագեան Հայաստանի Ազգային Արխիւի նիւթերու հիմամբ ներկայացուց Սուտանի հայ համայնքի պատմութիւնը՝ ԺԹ. դարավերջին մինչեւ մեր օրերը: Դր. Արտակ Մաղալեան ներկայացուց Եթովպիա այցելած հայ ուղեգիրներուն ճանապարհորդական գիրքերը, նոթերը եւ արժեւորեց զանոնք: Փարիզի ՀԲԸՄ Նուպարեան Մատենադարանի երիտասարդ եւ աշխուժ տնօրէն Դր. Պորիս Աճէմեան իր զոյգ դասախօսութիւններով ներկայացուց հայերու աւանդը Եթովպիոյ, մանրամասնեց Եթովպիոյ կայսերական ֆանֆարի Երուսաղէմի Արարատեան Որբանոցի սաներուն մասին, եւ մանրամասնեց թէ ինչպէս Եթովպիան՝ իբրեւ ուղղափառ երկիր, Եթովպահայերուն համար նկատուած է հայրենիք եւ թէ ինչ քաղաքականութեամբ Եթովպիոյ կայսրերը ներգրաւած էին հայերը պետական ծառայութեան համակարգին մէջ: Շահեկան էր նաեւ Ռուբինա Սվաճեան-Քինկուէլի գեկոյցը իր հօր՝ արքայական ոսկերիչ Պետրոս Սվաճեանի մասին: Սվաճեան ներկայացուց անոր հաստատուիլը Եթովպիա, եւ թէ ինչպէս ան ստացած էր կայսեր պաշտօնական արտօնագիրը՝ ոսկերչական արտադրամասին հիմնելու մասին: Գիտաժողովի աւարտին տեղի ունեցաւ քննարկում եւ ընդհանուր արժեւորում, ուր կարեւորուեցան նման գիտաժողովներու անհրաժեշտութիւնը, անոնց յառաջացուցած խթանը՝ նմանատիպ ուսումնասիրութիւններու եւ նման գիտաժողովներու համար անհրաժեշտ նիւթաբարոյական աջակցութիւնը: Նիստերէն մէկուն աւարտին ներկայացուցան վերջին երեք տարիներուն հայկական Սփիւռքին նուիրուած արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն լոյս տեսած խումբ մը գիրքեր, որոնցմէ ոմանց հեղինակները ամփոփ գիրքերու մէջ մանրամասնեցին իրենց երկերուն որոշ երեսակները: Այդ գիրքերն էին.- Դոկտ. Եազըճեանի կազմած՝ Սփիւռքահայ քաղաքական հոսանք-

ներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991), Գոհար Աւագեանի կազմած Լիբանանահայ համայնքը (1915-1990) ըստ արխիւային փաստաթղթերի, Տոքթ. Սուրէն Պայրամեանի երկասիրած Հայկական համայնքային կառուցները Եգիպտոսի մէջ, Ռուբինա Աւագեանի կազմած On the record, Armenian Deputies in the Lebanese parliament 1922-1972 եւ 1972-2017, Դոկտ. Սօսի Գասպարեանի համախմբագրած Diasporas of the modern Middle East (contextualizing community), Դր.ներ Քրիստին Պապիկեան-Քարլա Էտտէ-Վահէ Թաշճեան-Լեոն Նորտիկեանի համախմբագրութեամբ լոյս տեսած Les Armeniens du Liban. Cent ans de presence, Դոկտ. Տագէսեանի Բարսեղ Կանաչեան (1885-1967). կեանքի մը երաժշտացումը, Դոկտ. Սեդա Օհանեանի իրաքի համայնքը 20րդ դարում, Տոքթ. Սարգիս Պուրուստեանի Դամասկոսի հայերը, Մուհամմատ Աթալլա ԱլՄանիի Մանի Հայերը (1915-2016), Գէորգ Մարրլեանի իրպիտի եւ հիւսիսային Յորդանանի հայերը, Դոկտ. Ժամայ Քամալի Արհեստներն ու արհեստաւորները արդի Եգիպտոսի մէջ (վերջին չորսը՝ արաբերէն), Փրոֆ. Մութաֆեանի La saga des Armeniens de l'Ararat aux Carpats նորագոյն երկը: Իսկ անգլիագիր վիպագիր, ծնունդով սուտանցի, նախկին Եթովպահայ այժմ անգլիաբնակ Ռուբինա Սվաճեան-Քինկուէլ ներկայացուց Հայոց Յեղասպանութեան նուիրուած իր եռահատոր վէպին Ա. եւ Բ. հատորները, որոնցմէ առաջինը կը վերաբերի համիտեան ջարդերուն, իսկ երկրորդը Յեղասպանութեան առաջին տասամիսներուն: Ուշագրաւ է որ անգլերէն այս հատորները հասցեագրուած են պատանի ընթերցողներու: Նիստերէն անջատ, ներկաները առիթ ունեցան դիտելու Հայկազեան Համալսարանի Մուկար Արուեստից ցուցասրահ ցուցադրուած Ալեքսանդր Սարուխանի շուրջ 50 երգիծանկարներու կրկնօրինակները, որոնք ազնուօրէն տրամադրուած էին տիար Շահէ Խաչատուրեանի եւ ՀԲԸՄ Տէմիրճեանի Կեդրոնին կողմէ: Յուցադրուած էին նաեւ եգիպտահայութեան մասին հրատարակուած հայ եւ օտար երկասիրութիւններ՝ Հայկազեան Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանէն: Գիտաժողովին առաջին օրը եւ Եթովպահայ Վարդգէս Նալպանտեան դասախօսութեամբ մը ներ-

Շար.ը էջ 19

LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY



**M MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**

**Bedros & Siamanto**  
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
MARONIANINSURANCE.COM

ԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ «ՊԱՏԻԺ», ԵՒ ՊԱՏԻԺ

ՀԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՎԱՐԱՆ ԲԱՅԱՐԵԱՆ

Երկու յօդուածներ եմ մէջբերում:

1. Երեք երեխաների մօրը «բռնացրել» էին միջերկրացիները գողանալիս, ոստիկանները հետեւեցին նրան մինչեւ իր տուն եւ արեցին այն, ինչ ոչ ոք չէր սպասում ի՞նչ դուք կ'անէիք, եթէ ձեր երեխաները սոված լինէին, իսկ դուք չունենայիք մի մարդ, ումից կարող էիք օգնութիւն խնդրել: Երեք երեխաների մայրը յայտնուել էր այդ սարսափելի իրավիճակում: Նա ուրիշ տարբերակ չունէր՝ բացի խանութից ուսելիք գողանալուց:

Թերեզա Ուեստը պատրաստ էր ամէն ինչի, սակայն անգամ չէր էլ մտածում, որ տեղի ոստիկաններն այդպէս կը վարուէին: Նոյնմբեր ամսուայ սկզբին ոստիկաններ կիտ Բրեդ-շոուն եւ Կենդիւ Սպրանգինսը տեղեկութիւն ստացան, Food Lion խանութում գողութիւն է տեղի ունեցել: Նրանց շտապ ուղարկեցին դէպքի վայր: Կիտը եւ Կենդիւնը որոշեցին միանգամից չձերբակալել յանցագործին, այլ սկսեցին հետեւել Թերեզային մինչեւ իր տուն: Եւ նրանք անգամ չէին էլ զոյջում, որ այդպէս վարուեցին. չէ՞ որ նրանք իմացան երեք երեխաների մօր՝ այդ քայլին դիմելու իրական պատճառը:

Թերեզան պատմում է. «Ես օգնութիւն եմ խնդրել, սակայն երեք օր է իմ սեղանին դատարկութիւն էր: Եւ այդ ժամանակ ես ուղղակի ուրիշ ելք չունէի»:

Խեղճ մայրը գողացել էր խանութից առաջին անհրաժեշտութեան իրերը եւ սնունդը: Գումարն այդքան էլ շատ չէր կազմել՝ 36 տոլար: Իհարկէ, ոստիկանները ստիպուած էին տուգանել կնոջը: Իսկ նա իր հերթին վերադարձրեց բոլոր ուսելիքները, որոնք գողացել էր:

«Սա անգամ չի կարելի յանցագործութիւն անուանել. չէ՞ որ նա դա արել էր անհրաժեշտութեան համար: Նա ընդամենը ուզել է կերայանկրել իր երեխաներին», - գրել է այդ շրջանի ոստիկանութիւնն իր Facebook-եան էջում:

Սակայն պատմութիւնն այսքանով չաւարտուեց: Նոյն օրը երեկոյեան ոստիկանական զոյգը վերադարձաւ Թերեզայի տուն: Նրանք բերել էին կնոջը եւ երեխաների համար ուսելիք՝ վճարելով գնումների համար 140 տոլար: Ոստիկանները ծախսել էին այդ գումարը սեփական գրպաններից: Ընտանիքի համար նրանք գնել էին առաջին անհրաժեշտութեան բոլոր մթերքները՝ միս, մրգեր, բանջարեղեն եւ այլն: Ինչ-որ մէկի համար սա սովորական բան է, սակայն դա շատ մեծ բան էր նշանակում բազմազաւակ մօր համար: Նրանց հմոցիաները բառերով փոխանցել դժուար է:

Հիւսիսային շրջանի ոստիկանութիւնը, որտեղ էլ որ տեղի էր ունեցել այս ամէնը գրել է. «Առաջին հերթին մենք բարի սրտով մարդիկ ենք, յետոյ նոր՝ ոստիկաններ: Մենք յաճախ ենք կարեկցում մարդկանց: Կապիտան Բրեդշոուն եւ սպա Սպրանգինսն արժանի են գովասանքի»:

Եւ իսկայէս, ոստիկանները նոյնպէս կարող են, բացի մարդկանց պաշտպանելուց, անել այսպիսի բարի գործեր:

2. Ուսելիքի Համար Գողացած Բազմազաւակ Մայրը Դատապարտուեցաւ 6.5 Տարուան Բանտարկութեան

ԵՐԵՒԱՆ, «Սիւլիլինթ».-Սիւլիանցի բազմազաւակ միայնակ մայր Յասմիկ Սարգսեան դատապարտուեցաւ վեցուկէս տարուան ազատազրկման՝ 4000 դրամ գողնալուն համար: Յասմիկ դրամը գողացած էր կերակրելու համար իր երեխաները: Ոստիկանութիւնը ձեռակերպած է գողութիւնը 10,000 դրամ եւ քրէականացուցած է արարքը: Յասմիկը պարբերաբար փնտռած է դրամ վաստակելու միջոցներ, սակայն պետական մարմինները գրկած են զայն նպաստէ: Ան չէ յաջողած աշխատանք գտնել: Ընտանիքը կը շարունակէ Ապրիլ առանց ելեկտրականութեան եւ որեւէ գումարի (տե՛ս «Ասպարէզ», Զորքաբաժնի, 4 Ապրիլ 2018, էջ 4):

Վերոնշեալ յօդուածները կարդալիս ինքս ինչ էջի գտնում, օրեր շարունակ մտածում էի, թէ մարդկութեան մի մասը երկրագնդի մի ցամաքամասի մի երկրում ինչպիսի գարգացում է ապրում՝ աշխատելով օգնել «նեղն ընկածին»՝ ոստիկանութիւնը եւ ոստիկանները հարցը չսպասուած ձեւով լուծելով՝ բաւարարում են բազմազաւակ մօր կարիքները առանց դատ ու դատաստանի, իսկ մի ուրիշ ցամաքամասի մի երկրում՝ մեր հարազատ Հայրենիքում՝ Հայաստանում ինչպիսի գարգացում է ապրում, եւ դարերից մեր սերունդներին փոխանցող սրբութիւն համարուող հայ ընտանիքի մայրը դատապարտուում ու բանտ է նստում ինչ-որ մէկի ցանկութեամբ: Նախ նշենք, որ շատերի շուտի խօսքերը մեր մշակոյթի հնագոյն լինելու մասին այսօր նսեմանում են: Մեր բնօրրանը եղել է մշակութային օճախ ամբողջ աշխարհի համար, բայց, դժբախտաբար, մեր օրերում այդ մշակութային օճախը դառնում է բանտ հայ մօր համար, որ անհաւատալի է: Երբ յօդուածը կարդացի աչքերիս չէի հաւատում: Մի գուցէ առաջին անգամ էի հանդիպում մամուլում հայ մօր բանտարկութեան մասին, այն էլ 4000 դրամի համար: Նշենք, որ «գողութիւն» բառը միայն փող-դրամ գողանալու մէջ չէ, որ դատապարտելի է. դա անօրինական երեւոյթ է ցանկացած գողութեան դէպքում եւ գողութիւն կատարողը պէտք է ստանայ իր արժանի պատիժը:

Առաջին յօդուածում բազմազաւակ մայրը ուսելիք է գողնում խանութից իր սոված երեխաներին կերակրելու համար, որի արժէքը կազմում է 36 դոլար, իսկ երկրորդ յօդուածի բազմազաւակ մայրը, ըստ յօդուածի, 4000 դրամ է գողանում (մօտաւորապէս 10 տոլար) իր երեխաներին սովից փրկելու համար, այն էլ այն բանից յետոյ, որ ոչ մի կերպ չի յաջողում նրան աշխատանք գտնել եւ պետական մարմինների կողմից էլ գրկուած է նպաստից: Այդ բոլորից յետոյ ոստիկանութիւնը 4000 դրամի փոխարէն, գողութիւնը ձեռակերպել է 10,000 դրամ եւ հայ բազմազաւակ մօր 6.5 տարուայ ազատազրկման է դատապարտել: Թէ ի՞նչ է թաքնուած յօդուածի տողերի տակ, որ հայ բազմազաւակ մայրը աշխատանք չի գտնում եւ նրան պետական նպաստ էլ չեն տալիս...: Ինչո՞ւ իրականութիւնը չեն գրում հայ

ՊԵՏՐՈՍ ՍԵՖԵՐԵԱՆ

Յեղասպանութենէն ազատած հայերը շոգենաւերոտ մէջ տեղադրուելով աշխարհով մէկ տարածուեցան, ոմանք Ֆրանսա, Յունաստան, Եգիպտոս, Լիբանան: Ծնողքս Լիբանանի Սայտա քաղաքը իջեւանած են:

Օտար լեզուին եւ միջավայրին որոշ ժամանակ անց ժողովուրդը քիչ մը գաղափար ունեցաւ եւ ընտելացաւ արաբերէն լեզուին եւ արաբական մշակոյթին:

Արհեստաւոր մարդիկ սկսան աշխատիլ իրենց արհեստով՝ ընտանիքի ծախսերը հոգալու համար: Պէյրուսի ծովեզերեայ շրջանի մէջ մեծ հողաշերտի մը վրայ սկսան կառուցել թիթեղաշէն հիւղակներ եւ հոն սկսան ապրիլ: Պէյրուսի գետի միւս ափը՝ Անդր Նահար կը կոչուէր, որ յետոյ դարձաւ Պուրճ Համուտ, ուր սկսան տուններ շինել: Տարիներու սահանքին հետ

մօր մասին:

Իմաստասիրութիւն (փիլիսոփայութիւն) գիտութեան մէջ կայ շատ կարեւոր երկու բառ, որոնց հիմքի վրայ էլ գարգանում է մարդկութիւնը՝ պատճառ եւ հետեւանք: Տուեալ դէպքում հայ մօր մասին հետեւանքը 4000 դրամի գողութիւնն է, իսկ գողութեան պատճառը կամ դրդապատճառը ինչո՞ւ պարզ ձեւով չի գրուած, թէ ի՞նչն է...: Այդ մայրը ամուսին էլ չունի, երեխաների մասին ով է հոգ տանելու, եւ դեռ այդ երեխաները հետագայում ծառայելու են հայկական բանակում, նրանք չեն պրպտի մօր բանտ նստեցնելու մեղաւորին գտնելու ու արժանիօրէն պատժելու համար...:

Այժմ պարզեմք, թէ ի՞նչ տարբերութիւն կայ գողութեան այս երկու ձեւերի մէջ, որոնք կատարուում են նոյն նպատակի համար: Մի դէպքում ոստիկանութիւնը եւ ոստիկանները ցոյց են տալիս համամարդկային մարդասիրական վերաբերմունք՝ նոյնիսկ բազմազաւակ մօրը օրէնքով տուգանելով, իսկ միւս դէպքում՝ լրացուցիչ գումար են աւելացնում մօր գողացած գումարին, որ նրան ազատազրկման են թարկեն 6.5 տարով: Երկու դէպքում էլ գողութիւնը կատարուել է նոյն նպատակի՝ երեխաներին կերակրելու համար, բայց դա արդարացում է պատասխանատուութիւնից խուսափելու համար, քանի որ օրէնքով չթուլատրուող յանցանք է կատարուել եւ յանցանքը կատարողը պէտք է պատասխան տայ օրէնքի առջեւ:

Արդե՞օք ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը Հայ մայրերին ու կանանց իր ուղերձը յղելիս չի շարժուել իր լեզուի նախօրեակին դատապարտ-

ժողովուրդի կենսամակարդակը բարելաւուելով շինեցին եկեղեցի եւ դպրոց: Հետզհետէ եկեղեցիներն ու դպրոցները շատցան: Պէյրուսի մէջ կար կիրիկիոյ կաթողիկոսութիւնը, Ջմմարի վանքը, քաղաքի Հայ Սբուլ վարժարանը, Սահակեան վարժարանը: Հայկական կուսակցութիւններու մասնաճիւղեր հիմնուեցան, անոնց հովանիին տակ գործող միութիւններ, մարզական եւ մշակութային կեդրոններ: Դպրոցներէ շրջանաւարտներ դարձան ուսուցիչներ, թերթի խմբագիրներ: Ուսման մակարդակը երթալով բարձրացաւ, վարժարանները հետզհետէ սկսան աւելի զարգանալ: Մարզական ակումբներու կողքին ստեղծուեցան սկաուտական շարժումներ:

Այս բոլորը կը պարտինք մեր հայրերու գորակոյ կամքին եւ ես հպարտութեամբ կ'ըսեմ որ մեր հայրերը մէկական հերոսներ են, դժուարութեանց առաջ չընկրկեցան, այլ յաղթեցին:

ուած հայ մօր մասին, որի դատապարտութեան մէջ, շատ հաւանական է, ինքն էլ ունի իր մեղքի բաժինը, որովհետեւ Հայաստանում ոչ մի «ճանճ չի տղզում» առանց իր հրամանի, այսինքն նա քաջատեղյակ էր այդ մօր ազատազրկման մասին: Փոխանակ հայ բազմազաւակ մօրը ապահովելու անհրաժեշտ կարիքներով եւ հարցը լուծելու ներքին խոհանոցում, որպէսզի հայ մայրը եւ հայ անունը մամուլի նիւթ չդառնայ, հակառակն են անում: Արդեօք առաջին յօդուածի ոստիկանութեան եւ ոստիկանների արարքը բաւարար է, որ մեր հնագոյն մշակոյթի գարգացման ճանապարհին ՀՀ կառավարութիւնը օրինակ վերցնի նրանցից...:

Առանց այն էլ հայր վերջին յոյսն էլ կորցնելով մղկտալով ու լալով թողնում հեռանում է հայրենիքից, երբ հնարաւորութիւն է ստեղծուում, որովհետեւ ժողովուրդին ստրկացրել են, որի հետեւանքով արտագաղթը չի դադարում, պատկան մարմինները նրա առաջը չեն կարողանում առնել, իսկ միւս կողմից նրանք ներգաղթի երազներով են սնուում...:

Կոչ ենք անում ՀՀ կառավարութեան պատկան մարմիններին. ինչպէս որ հայ մայրը փառաբանուում է հայոց պատմութեան մեջ դարերի ընթացքում, շարունակել նրա պատիւը բարձր պահել, բազմապատակ հայ մօրը ազատ արձակել եւ ապահովել ապրուստի ու ապրելակերպի անհրաժեշտ բոլոր միջոցներով, որ նա իր երեխաներին հոգ տանի ու հայրենիքին նուիրուած պիտանի գաւակներ մեծացնի սահմանները ամուր պահելու համար, որպէսզի հայ ժողովուրդը իր բնօրրանում ապահով ապրի:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
**Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով**  
**հեռաձայնել՝ (626) 398-0506**



### ԾՆՈՂՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԲԵՐԻՆ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ՍԵՌԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԵՏ

Ծնողները ընդհանրապես կը խուսափին իրենց փոքրիկներուն հետ սեռային հարցերու մասին գրուցելէ: Նոյնիսկ ինքնավստահ ծնողներ երբեմն անյարմար վիճակներու մէջ կը յայտնուին, երբ փոքրիկը կը հասնի սեռային հասունութեան տարիքին եւ կը սկսի հետաքրքրուիլ իր նման ներուն ծնունդով:

Կարեւոր է այս նիւթը չըջանցել: Եթէ ծնողները կարենան փոքրիկներուն հարցումներուն պատասխանել անոնց տարիքին յարմար ձևով՝ անոնք յաջողած կ'ըլլան առողջ պատկերացում մը տալ սեռային յարաբերութեան ու ծնունդին մասին:

Փոքրիկները կանուխէն կը սկսին հետաքրքրուիլ իրենց մարմինով. յատկապէս լոզանքի ժամանակ՝ անոնք կը նկատեն տղոց եւ աղջիկներու մէջ եւ ֆիզիքական տարբերութիւնները: Զարգացման այս հանգրուանին անոնք հաւանաբար տակաւին ամօթի զգացումը չեն ունենար:

Փոքրիկի այս հետաքրքրութիւնը բնական է, հետեւաբար պէտք է պատժել կամ յանդիմանել զայն:

Ինչ պէտք է ընել, երբ փոքրիկին հետաքրքրութիւնները սկսին զարգանալ: Սովորաբար ամէն ընտանիք իրեն համապատասխան կ'արձագանգէ այս հարցին:

Պէտք է յիշել, որ ծնողքին ունեցած անդրադարձը փոքրիկին կը հասկցնէ, թէ իր այս կամ այն շարժումը ընդունելի է կամ ամօթալի: Սակայն, այն փոքրիկները, որոնք ընդհանրապէս կը յանդիմանուին՝ ամօթխած կը մեծնան:

Ուստի, պէտք է զգուշ ըլլալ այս հարցին նկատմամբ: Որոշ ծնողներ կը նախընտրեն անտեսել փոքրիկին հետաքրքրութիւնը իր մարմնի անդամներուն հանդէպ եւ կը փորձեն անոր ուշադրութիւնը շեղել այլ ուղղութեամբ:

Ամէն պարագայի, փոքրիկը մինչեւ երեք տարեկան պէտք է ճանչնայ իր սեփական մարմինը, սակայն նրբօրէն պէտք է հասկցնել անոր ճիշդ ու սխալ շարժումներն ու արարքները:

Փոքրիկը երեք տարեկանին արդէն կրնայ սեռային օրկանները անուանել իրենց անուններով, այսպիսով ան կը սորվի այդ բառերը օգտագործել առանց ամօթխածութեան:

Երբ փոքրիկը գիտակից դառնայ, կարելի է բացատրել, որ

մանուկը կը ձեւաւորուի մօր ձուլաբերիչէն, կը մեծնայ մօր փորին մէջ՝ ցոյց տալով ստամոքսը: Անհրաժեշտ է ամէն մանրամասնութիւն փոխանցել, որովհետեւ ան ի վիճակի է այդ մէկը ընկալելու: Յամենայն դէպս կարելի է ըսել, որ երբ կրնան ու տղամարդը իրար շատ կը սիրեն, անոնք կը փափաքին միշտ իրարու մօտ ըլլալ: Նաեւ կարելի է ըսել, որ տղամարդու սերմաբջիջը կը միաւորուի կնոջ ձուլաբերիչին հետ եւ կը ձեւաւորուի մանուկը: Մինչեւ վեց տարեկան, շատ մը փոքրիկներ կը հասկնան այս ամէնը:

Եթէ փոքրիկը հինգ տարեկանի մօտ է, կարելի է անոր ներկայացնել գիրքեր, որոնք, ըստ տարիքի, նկարներով կը բացատրեն այդ եւ կնոջ յարաբերութիւնը: Ծնողները կը դժուարանան գտնել ճիշդ բառերը, հետեւաբար կարելի է դիմել գիրքերու օգնութեան: Բայց առաջին հերթին ծնողքը ինք պէտք է ըլլայ տեղեկութիւնը փոխանցողը:

Աղջիկներու հասունութեան տարիքին, անոնք, նաեւ տղաքը, պէտք է դաշտանի մասին տեղեկութիւններ ունենան ութ տարեկանէն սկսեալ: Այս տարիքին կը դրսեւորուի աղջիկներու հետաքրքրութիւնը: Դաշտանի մասին տեղեկութիւններ պէտք է փոխանցեն նաեւ դպրոցները: Ծատ մը մայրեր իրենց աղջկան հետ կը կիսեն իրենց անձնական փորձը, պատմելով, թէ իրենց մօտ ե'րբ եւ ինչպէ'ս սկսաւ այդ փուլը:

Ծնողներ պէտք է սկսին սեռային դաստիարակութիւն ջամբել դպրոցէն շատ աւելի կանուխ: Սեռային կրթութիւնը տարբեր դպրոցներու մէջ տարբեր տարիքներու կը սկսի, բայց հիմնականը 5-6-րդ դասարաններուն պէտք է տրուի: Այն փոքրիկները, որոնք դպրոցին մէջ կամ դուրսը սեռային գիտելիքներ կը ստանան, շատ աւելի հարցադրոց կ'ըլլան: Ծնողներ պէտք է առաւել բժախնդրութեամբ պատասխանեն անոնց բոլոր հարցումներուն:

Մարդկային մարմինը յաճախ փոփոխութեան կ'ենթարկուի եւ սեռային օրկաններու բնական աճը չափազանց կարեւոր է մարդու զարգացման համար: Եթէ ծնողքը կը դժուարանայ կամ չի կրնար կողմնորոշուիլ փոքրիկին հարցումներուն ճշգրիտ պատասխաններ տալու, հարկ է այս մասին խորհրդակցիլ մասնագէտի մը հետ:

### ԿԱՆԽԱԶԳԱՑՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՍՈՎՈՐԱԲԱՐ ԿՇԻՐԱԿԱՆԱՆԱՆ

Իւրաքանչիւր մարդ իր կեանքը կրնայ փոխել դէպի լաւը՝ սորվելով վստահիլ իր կանխագագացումին: Յաջողութեան հասնելու համար, անհրաժեշտ է չարհամարհել որոշ նշաններ:

Վեցերորդ զգացողութիւնը տրուած է բոլորին եւ զայն պէտք է զարգացնել: Յաճախ մարդիկ չեն նկատեր կամ կ'անտեսեն նշանները, որոնք հնարաւորութիւն կու տան կեանքը դէպի լաւը փոխելու: Անյաջողութիւններէն խուսափելու համար լսեցէք դուք ձեզի, այդ ձեւով դուք դիւրութեամբ պիտի կարենաք լուծել շատ խնդիրներ:

- Ուրախութեան զգացողութիւն: Սորվեցէք կախեալ չըլլալ ուրիշի կարծիքէն եւ ապրիլ ձեր խելքով, այլ ոչ թէ ուրիշներու խորհուրդներով, թէ ինչպէս ճիշդ է: Եթէ դուք հաճոյք կը ստանաք աշխատանքէն եւ հաճելի անհանգստութիւն կը զգաք ձեզի համար ծրագրաւորութեան, խիզախօրէն վարուեցէք այնպէս, ինչպէս կը թելադրեն ձեր զգացմունքները: Եթէ նոյնիսկ ձեր գործողութիւնները չեն համընկնիր շրջապատի կարծիքին հետ, ատիկա պատճառ է կանգ առնելու:

- Հիւանդութեան նախագագացում: Եթէ դուք կը զգաք, որ ձեր մարմնին հետ որեւէ սխալ բան կայ, ուշադիր եղէք ձեր զգացողութիւններուն: Երբեմն անտեսումը կրնայ ցաւալի հետեւանքներու տանիլ: Դուք կրնաք առանձին նախանշաններ զգալ՝ ցաւ, ծակոց, անհաւասարակչութիւն կամ ուղղակի անյարմարաւէտութիւն: Յիշեցէք, որ մարմինը շատ յաճախ յուշումներ կու տայ, այդ պատճառով անյապաղ գործողութիւններու ձեռնարկեցէք հիւանդութիւնները բացառելու համար: Տհաճ զգացողութիւնները կրնան յառաջանալ ո'չ միայն ֆիզիքական,

այլեւ հոգեւոր պարտմանէն, այդ պատճառով մի' բացառէք վարժութիւնները, որոնք կ'օգնեն վերագտնելու ներքին ներդաշնակութիւնը:

- Վտանգի զգացողութիւն: Ասիկա ամենատարածուած զգացողութիւնն է: Անիկա կրնայ արտայայտուիլ ե'ւ ան հանգստութեամբ, ե'ւ ֆիզիքական նշաններով: Եթէ դուք վախ կը զգաք, վերլուծեցէք ձեր զգացողութիւնները՝ հասկնալու համար թէ ուրիշ կու գայ վտանգը: Այդ ձեւով դուք պիտի կարենաք նուազեցնել վտանգաւոր իրավիճակը կամ ամբողջութեամբ կանխել զայն՝ լսելով միայն ձեր ներքին ձայնը:

- Մարդու ձգողութեան զգացողութիւն: Ոեւէ մէկուն մտերմանալու զգացողութիւնը ուշադրութեան կարիք ունի, քանի որ ձեր բնագոյրը կրնայ ձեզ տանիլ այն մարդու մօտ, որ ձեր կեանքին մէջ վճռական դեր պիտի խաղայ: Եթէ դուք կը զգաք ձգողութիւն, անպայման լսեցէք այդ զգացողութիւնը եւ կապ հաստատեցէք այդ մարդու հետ:

- Սեփական ճշմարտացիութեան զգացողութիւն: Ձեր սիրտը միշտ ճիշդ ուղղութեան կը տանի, անկախ շրջապատի կարծիքէն եւ գործողութիւններէն: Ականջ դրէք ձեր զգացումներուն՝ անհրաժեշտ վստահութիւնը ձեռք բերելու համար:

Երբեք մի' անտեսէք այդ զգացողութիւնը, որպէսզի չետազային չափսոսաք կորստած ժամանակին եւ հնարաւորութեան համար:

- Կեանքը աւելի լաւացնելը անհրաժեշտ է եւ ատոր համար իւրաքանչիւր մարդ պէտք է ուշադրութիւն դարձնէ իր զգացողութիւններուն եւ ներքին յուշումներուն: Անոնց օգնութեամբ կարելի է գտնել կարճ ճանապարհը դէպի յաջողութիւն:

### ԸՆՏԱՆԻՔԻ ՅՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՍԱՆ

Յայտնի բժիշկ-մանկաբույժ մը կը պատմէ, թէ ինչ պէտք է ընել՝ տան միջնորդութեամբ բարենպաստ դարձնելու ընտանիքի բոլոր անդամներուն համար:

1) Գլխաւորը ընտանիքի առողջութիւնն ու երջանկութիւնն են: Ընտանիքը պէտք է ապրի ոչ թէ փոքրիկի, այլ՝ ընտանիքի հետաքրքրութիւններով: Ես չեմ կրնար պատկերացնել, որ իմ փոքրիկին շոքոլայ նուիրեն ու ան այդ շոքոլան չբաժնէ ընտանիքի բոլոր անդամներուն միջեւ:

2) Իրավիճակը, երբ կրնը փոքրիկին վերաբերող բան մը կ'որոշէ միայնակ, առանց ամուսինին, անթոյլատրելի է: Փոքրիկին վերաբերող որեւէ որոշում ծնողի կողմէ միայնակ պէտք է ընդունուի: Հայրիկը պէտք է գլուխ հանէ փոքրիկը կերակրելէն, հագցնելէն, պէտք է գիտնայ, որ ինչ կը կատարուի անոր դպրոցէն ներս՝ ոչ պակաս, քան մայրը:

3) Երջանիկ է այն փոքրիկը, որ ունի հայր եւ մայր, որոնք ժամանակ կը գտնեն ոչ միայն իրենց փոքրիկը, այլեւ՝ իրար սիրելու համար:

4) Փոքրիկի խնամքով զբաղող մօր հոգեկան բարեկեցութեան ապահովումը հօր գլխաւոր խնդիրն է:

Հայրը պարտաւոր է կարգաւորել բոլոր հարցերը՝ կապուած բարեկամներու եւ դրացիներու հետ ունեցած յարաբերութիւններուն:

5) Եթէ փոքրիկը յաճախակի կը հիւանդանայ, կը նշանակէ, որ ան խնդիր ունի շրջակայ միջավայրին հետ, եւ այդ հարցը լուծելու համար կայ գործողութիւններու երկու տարբերակ՝ բուժել փոքրիկը կամ փոխել շրջակայ միջավայրը:

6) Եթէ փոքրիկը ամբարն ընթացքին երկու ամիս անօթի, աղտոտ ու ոտաբոսիկ վազվզէ ամառանոցին մէջ, ատիկա անոր առողջութիւնը կը վերականգնէ ամբողջ տարուան համար: Այդպէ'ս պէտք է ըլլայ բնական փոքրիկը՝ նիհար եւ աշխոյժ:

7) Փոքրիկի վերաբերեալ բոլոր սկզբունքային որոշումները կրնան կայացնել միայն մայրը, հայրը եւ մանկաբույժը: Բարեկամները կրնան խորհուրդ տալ, բայց նախ եւ առաջ այն պայմանով, եթէ ի վիճակի են չնեղանալու, եթէ իրենց խորհուրդները անտեսուին:

8) Ընտանիքի բարեկեցութեան գլխաւոր պայմանը մօր առողջական վիճակն է: Հայրիկը պէտք է ամէն գնով մայրիկին հնարաւորութիւն տայ ուտելու, քննաւալու եւ զբօսնելու:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel:----- Email: -----

ՄԱՐԶԱԿԱՆ

Նադալի 11-րդ Տիտղոսը «Ռոլան Գարոսում»

Սպանացի Ռաֆայել Նադալը 11-րդ անգամ նուաճեց թենիսի Ֆրանսա-յի բաց առաջնութեան ախոյեանական գաւաթը: Աշխարհի առաջին ուսուցիչը եզրափակիչում մրցեց աւստրիացի Դոմինիկ Տիմի հետ եւ չհանդիպեց լուրջ դիմադրութիւն: Նադալը յաղթեց 6:4, 6:3, 6:2 հաշուով: Պայքարը տեւեց 2 ժամ 42 րոպէ:



32-ամեայ Նադալը 17-րդ տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում («Ռոլան Գարոս»՝ 11, US Open՝ 3, Ուիմբլդոն՝ 2, Australian Open՝ 1):

«Գոլդեն Սթեյթը»՝ NBA-ի Ախոյեան



Պասքետպոլի ազգային ասոցիացիայի (NBA) եզրափակիչի չորրորդ խաղում «Քլիվլենդը» տանը 85:108 հաշուով պարտուեց «Գոլդեն Սթեյթին»: «Ուորիորսը» պատմութեան ընթացքում 6-րդ անգամ նուաճեց NBA-ի տիտղոսը:

Խաղի հերոսը «Գոլդեն Սթեյթի» պաշտպան Ստիվեն Կարին էր, որը վաստակեց 37 միակոր: Կարին խաղընկեր Կեւին Դիւրանտը դարձաւ թրիփլ-դաբլի հեղինակ վաստակեց 20 միակոր, տիրեց 12 անդրադարձի եւ կատարեց 10 փոխանցում:

«Քլիվլենդի» կազմում ամենաարդիւնաւէտը գործեց Լեբրոն Ջեյմսը (23 միակոր):

«Գոլդեն Սթեյթը» վերջին 4 մրցաշրջանում երրորդ անգամ դարձաւ ախոյեան: Նրանք լաւագոյնն էին նաեւ 2014/15, 2016/17 եւ 2017/18 մրցաշրջաններում:

Անգլիայի Պրեմիեր Լիգայի Ամենաբարձր Վարձատրութեամբ Ֆուտպոլիստների Տասնեակը

Լոնտոնի «Տոտենհեմի» հետ կնքած նոր պայմանագրի շնորհիւ Անգլիայի հաւաքականի աւագ Հարի Քեյնը շաբաթական 200 հազար ֆունտ ստերլինգ աշխատավարձով յայտնուել է Անգլիայի Պրեմիեր Լիգայի ամենաբարձր վարձատրութիւն ունեցող ֆուտպոլիստների տասնեակում, որը ներկայացրել է The Telegraph-ը:

1. Ալեքսիս Սանչես («Մանչեսթեր Յունայթեդ»)՝ 500 հազար ֆունտ շաբաթական
2. Մեսութ Օզիլ («Արսենալ»)՝ 350 հազար ֆունտ
3. Պոլ Պոզբա («Մանչեսթեր Յունայթեդ»)՝ 290 հազար ֆունտ
4. Սերխիո Ագուերո («Մանչեսթեր Սիթի»)՝ 260 հազար ֆունտ
5. Կեւին Դէ Բրուլնէ («Մանչեսթեր Սիթի»)՝ 250 հազար ֆունտ
6. Ռոմելու Լուկակու («Մանչեսթեր Յունայթեդ»)՝ 245 հազար ֆունտ
7. Էդեն Ազար («Չելսի»)՝ 220 հազար ֆունտ
8. Սեսի Ֆաբրեգաս («Չելսի»)՝ 210 հազար ֆունտ
9. Դեւիդ Դէ Խեա («Մանչեսթեր Յունայթեդ»)՝ 205 հազար ֆունտ
10. Հարի Քեյն («Տոտենհեմ»)՝ 200 հազար ֆունտ

Մբապէի Կոլը Ֆրանսային Թիմին Փրկեց Պարտութիւնից

Աշխարհի առաջնութեան մասնակից Ֆրանսայի հաւաքականը Լիոնում տեղի ունեցած ընկերական խաղում ընդունեց ԱՄՆ-ի թիմին, որը 44-րդ րոպէին բացեց հաշիւը: Ֆրանսացիները պարտութիւնից փրկուեցին վերջնամասուն յարձակող Կիլիան Մբապէի խփած կոլի շնորհիւ: Գրանցուեց ոչ ոքի՝ 1:1:

Աշխարհի առաջնութեան խմբային փուլում Ֆրանսայի հաւաքականը կը մրցի Աւստրալիայի, Պերուի եւ Դանիայի թիմերի հետ:

Մեսին Զի Բացառել, Որ ԱԱ-ից Յետոյ Կ'աւարտի Կարիերան Հաւաքականում

«Բարսելոնայի» յարձակող Լիոնել Մեսին չի բացառել, որ Ռուսաստանում կայանալիք աշխարհի առաջնութիւնից յետոյ կարող է աւարտել կարիերան Արժենթինայի հաւաքականում:

«Ամէն ինչ կախուած կը լինի աշխարհի առաջնութիւնում մեր թիմի արդիւնքից: Մենք պարտութիւններ ենք կրել երբեք եզրափակիչներում: Այդ պատճառով ես լարուած յարաբերութիւններ ունեցալ արժենթինական մամուլի հետ: Մենք տարբեր հայեացքներ ունենք եզրափակիչ հասնելու նշանակութեան վերաբերեալ: Եզրափակիչ հասնելը հեշտ է, եւ դա պէտք է գնահատուի: Աշխարհի առաջնութիւնում հանդէս կը գան բազմաթիւ լաւ խաղացողներ, բայց Արժենթինայի հաւաքականը եւս ունի բարձրակարգ ֆուտպոլիստներ», - Մեսիի խօսքը մէջբերում է Sport.es-ը:

Աշխարհի առաջնութեան խմբային փուլում Արժենթինայի մրցակիցները կը լինեն Իսլանդիան, Խորվաթիան ու Նիդերլանդները:

**Հ.Մ.Մ.ի Յառաջիկայ Ֆուտպոլի Խաղերը**  
 Հ.Մ.Մ. Angels ընդդէմ S. Juniors Griffith park 3401 Reverside Drive, Los Angeles, CA 90027, Կիրակի 17 Յունիս, 2018, Կ.ե. Ժամը 1:45ին:  
 Հ.Մ.Մ. Sahara ընդդէմ Inter LA Marshal High School 3939 Tracey Street, Los Angeles, CA 90027 Կիրակի, 17 Յունիս, 2018, Կ. ե. Ժամը 1:30ին:

Իբրահիմովիչի Դուբլը, «Լոս Անճելոս Գելաքսի» Յաղթանակը

Ֆուտպոլի հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական տուրում «Լոս Անճելոս Գելաքսին» տանը մրցեց «Ռեալ Սոլթ Լէյքը» հետ եւ առաւելութեան հասաւ 3:0 հաշուով:



61-րդ եւ 67-րդ րոպէներին աչքի է ընկել շուէդ յարձակող Ջլատան Իբրահիմովիչը, որը ՄԼՍ-ի ընթացիկ մրցաշրջանում մասնակցել է 11 հանդիպման, խփել 11 կոլ:

«Լոս Անճելոս Գելաքսին» 15 խաղում վաստակել է 20 միակոր եւ 8-րդն է Արեւմուտքում:

Նեյմարը Հաւասարուեց Ռոմարիոյին

ՊՍԺ-ի յարձակող Նեյմարը Պրագիլիայի հաւաքականում խփած կոլերի քանակով հաւասարուեց Ռոմարիոյին: Նեյմարը 85 խաղում խփել է 55 կոլ: Հաւաքականի նախկին խաղացող Ռոմարիոն նոյնքան կոլը խփել է 70 խաղում:

Պրագիլիայի հաւաքականի բոլոր ժամանակների լաւագոյն ումբարկուն Ռոնալդոն է (62 կոլ՝ 98 խաղում), երկրորդ տեղում է Պելէն (77 կոլ՝ 92 խաղում):

Յիշեցնենք, որ Նեյմարը աչքի է ընկել Աւստրիայի հաւաքականի հետ ընկերական խաղում: Պրագիլիան յաղթել է 3:0 հաշուով:

Մեսին ԱԱ-2018-ի Ուժեղագոյն Մասնակիցների Մէջ Զի Նշել Ռոնալդուին

Արժենթինայի հաւաքականի եւ «Բարսելոնայի» առաջատար Լիոնել Մեսին, խօսելով Ռուսաստանում անցկացուելիք աշխարհի առաջնութեան մասնակից ուժեղագոյն ֆուտպոլիստների մասին, չի նշել Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հաւաքականի առաջատար Կրիշտիանու Ռոնալդուին:

«Պրագիլիան ունի Նեյմար եւ Կոուտինիո, Սպանիան՝ Ինչեստա եւ Դաւիդ Սիլվա, Ֆրանսան՝ Գրիզման եւ Մբապէ: Բելգիայի հաւաքականում կարելի է առանձնացնել Ազարին եւ Դէ Բրուլնէին: Գերմանիայի հաւաքականում չկան աստղեր, բայց նրանք բոլորը միասին են շատ ուժեղ», - Մեսիի խօսքը մէջբերում է Mundo Deportivo-ն:

Յիշեցնենք, որ աշխարհի առաջնութիւնը կ'անցկացուի Յունիսի 14-ից Յուլիսի 15-ը:

Աբրամովիչը Հրաժարուել է 2 Միլիարդ Ֆունտ Ստերլինգով Վաճառել «Չելսին»

Ռուսաստանցի միլիարդատեր Ռոման Աբրամովիչը (կարողութիւնը 11 միլիարդ ֆունտ ստերլինգ) չի ընդունել Մեծ Բրիտանիայի ամենահարուստների ցանկը գլխաւորող Ջիմ Ռետկլիֆի (կարողութիւնը 2: միլիարդ ֆունտ) առաջարկը Լոնտոնի «Չելսի» ֆուտպոլային ակումբի վաճառքի վերաբերեալ: Աբրամովիչը ստացել է 2 միլիարդ ֆունտ ստերլինգի առաջարկ:

Աշխարհի խոշորագոյն քիմիական ընկերութիւններից Ineos-ի 65-ամեայ ղեկավար Ջիմ Ռետկլիֆը «Մանչեսթեր Յունայթեդի» երկրպագու է, բայց ունի նաեւ «Չելսիի» տնային հանդիպումների արձեմնետ:

Յիշեցնենք, որ Մեծ Բրիտանիան չի երկարաձգել Աբրամովիչի վիզան, եւ նա չէր կարողացել ներկայ լինել «Չելսիի» մասնակցութեան Անգլիայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչին: «Չելսին» 1:0 հաշուով յաղթեց «Մանչեսթեր Յունայթեդին»:

2003 թուականին Աբրամովիչը «Չելսիի» համար վճարել է 140 միլիոն ֆունտ ստերլինգ:

### ՇՆՈՐՀԱԻՐՈՒՄ

Քաթիա Քրմոյեան-Խոտանեանի տեղեկատուական Համակարգերու մասնագիտութեան մէջ (Master of Science in Information Systems) վկայուելուն ուրախ առիթով Տէր եւ Տիկ. Արփիար Ճանոյեան իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն եւ առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Շարունակուած էջ 15-էն

կայացուց եթովպիոյ հայօճախը իր պատմական անցեալէն մինչեւ այսօր: Խիստ շահեկան այս դասախօսութիւնը որոշ գուգահեռներ ունէր 2017 Մայիսի գիտաժողովին իրաքի հայօճախին ներկայ վիճակին նուր-ուած դասախօսութեան հետ:

Նիտերը վարեցին Դր.ներ Արտա էքմէքճի, Նանոր Գարակէօզեան, Արշալոյս Թօփալեան, Արմէն Իւրնէշլեան, Անդրանիկ Տափեան եւ Շաղիկ Խիւտավերտեան ու Եղիա Թաշճեան:

Գիտաժողովը յատկանշուեցաւ հայօճախներուն մէջ գործօն դեր ստանձնած գործիչներու, բայց մանաւանդ՝ դաշտային հետազոտութիւններ կատարած մասնագէտներու, երիտասարդ հետազոտողներու թէ՛ արխիւապահ պրպտումներ կատարած այլեւայլ ուսումնասէրներու մասնակցութեամբ: Ուրախալի էր որ 26 մասնակիցներէն չորսը կը պատկանէին երիտասարդ սերունդին. անոնց տարիքը չէր հասներ 30ին:

Աննախընթաց գիտաժողով մը եղաւ այս մէկը, ուր թերեւս կարելի էր աւելի արծարծել մերօրեայ խնդիրները, միջհայօճախային հարցերը, կապերը եւ գուգահեռներ գծել տարբեր հայօճախներու կարգ մը երեսակներու եւ երեւոյթներու միջեւ:

Գիտաժողովին մասնակիցները կը տիրապետէին իրենց արծարծած նիւթերուն: Զեկուցները կը զանազանուէին թէ՛ նիւթի բնոյթով, թէ՛ մեթոտոլոգիով եւ թէ՛ յառաջացման եղանակով, երբեմն նաեւ՝ ենթակայականութեամբ:

Զերմ, ազատ, անմիջական, նախանձախնդիր, երկար քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան Ափրիկեան Եղջիւրի հայօճախին անցեալին ու ներկային հայող շատ հարցեր, իրագործումներ:

Գիտաժողովի տեղողութեան գեղուցաբերներուն կողքին ներկայ եղան ունկնդիրներ, Սփիւռքի Նախարարութեան երկու պաշտօնատարներ, եգիպտահայ, Միջին Արեւելքի հայօճախներու ժամանակակից պատմութեամբ եւ ընդհանրապէս Սփիւռք-

քի ուսումնասիրութեամբ զբաղող փորձագէտներ, հետազոտողներ, մտաւորականներ, շաղախուեցան նոր մտածումներ, հաստատուեցան նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք կը ծառայեն սփիւռքագիտութեան:

Գիտաժողովը նաեւ իւրօրինակ երախտիք եւ ճանաչում էր Ափրիկեան Եղջիւրի հայութեան կատարած հայկական եւ մարդկային ճիգերուն:

Կեդրոնի կազմակերպած վերջին հինգ տարիներու գիտաժողովները Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի, Իրաքի եւ Եգիպտոս-Սուտան-Եթովպիոյ հայօճախներուն բեւեռուող լուսարձակներ են, որոնք նոր եւ հրատապ այժմէականութիւն կու տան Միջին Արեւելքի սփիւռքագիտութեան զարգացման, մղելով առնչուող հայութիւնը իր պատմութիւնը, դէպքերն ու զարգացումները շրջանի համապատկերով, Միջին Արեւելքի անդրսահմանային հայեցակարգով դիտելու եւ ընկալելու:

Բարերար տիար Երջօ Սամուէլեանի նուիրատուութեամբ կեանքի կոչուած Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը շնորհակալ է Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնին, որ նիւթական կարեւոր աջակցութեամբ մը զնահատեց գիտաժողովը:

Գիտաժողովին նիւթերը պիտի հրատարակուին յառաջիկային: Արդէն լոյս տեսած են Լիբանանի եւ Սուրիոյ հայօճախներուն նուիրուած գիտաժողովի հատորները, շուտով կը հրատարակուի Յորդանանի գիտաժողովին նիւթերուն հատորը:

Յառաջիկայ տարուան՝ Կեդրոնի գիտաժողովի նիւթ որոշուած է «Կիպրոս-Յունաստանի Հայերը» թեման: Այդ գիտաժողովը կը ծրագրուի կայացնել 2019 Մայիսին: Ծրագրային նախապատրաստական աշխատանքները արդէն իսկ ընթացք առած են: Այդ առումով, յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն:

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

### ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ

#### Լուսին Ընկերութեան Յիշատակին

Լուսին ձէպէճեանի մահուան երկրորդ տարելիցին առիթով, դուստրը՝ Մարլէն էքմէքճեան 200 տոլար կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:

### ՑԱՒԱՑԱԿԱՆ

ԼՈՒՍԻՆ ձէպէճեանի մահուան տարելիցին առիթով Տիկ. Մատլէն էքմէքճեան իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի բոլոր պարագաներուն: Առ այդ \$200 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

### Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան

Շարունակուած էջ 8-էն

ազգակիցներուն եւ այլոց: Կ'ուստենք լաւագոյնս կառավարել եւ տնտեսել մեր նախնիներու ձեռքբերումները»:

Ելոյթ ունեցաւ Բաֆֆի Մանտալեանին գործիքային խումբը, որ գեղեցկօրէն մեկնաբանեց փունջ մը հայկական ժողովրդային երգեր եւ ճազ եղանակներ՝ ճաշի ընթացքին:

Տեղի ունեցաւ «Ժառանգութիւն Հաւատքի, Սիրոյ եւ Ծառայութեան» խորագիրը կրող տեսերիկի ցուցադրութիւնը, որ վկայութիւններով կը խօսէր Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործունէութիւններու մասին:

Այնուհետեւ Հայկազեան Համալսարանի խնամակալութեան ատենապետ Դոկտ. Յասմիկ Պարանի ձեռամբ եւ յանուն Աւետարանչականին՝ պարգեւատրուեցաւ նախկին ատենապետ Տոքթ. Անի Տա-

րագճեանը ութամեայ անձնուէր ծառայութեան համար:

Հանդիսութիւնը փակուեցաւ ՄԱՀԱՅՄ-ի նախագահ վեր. Միլոտիչ Գարակէօզեանի շնորհակալական խօսքով, Աւետարանչականի պարգեւատրումով եւ օրհնութեան աղօթքով, ապա տեղի ունեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 100-ամեակի կարկանդակի հատումը:

Հուսկ, ընդգծենք թէ Լիբանանի մէջ տեղի ունեցող Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հարիւրամեակի գործունէութիւններու ընթացքին հաւաքուած նուէրները պիտի յատկացուին Լիբանանի մէջ գործող Հայ Աւետարանչական դպրոցներուն, իրենց կրթական առաքելութիւնը ամրապնդելու համար: Վերջապէս՝ ձաշկերոյթի իւրաքանչիւր հիւր ստացաւ 112 էջէ բաղկացած գունաւոր գրքոյկ մը նուիրուած ԱՀԱԸՀ հարիւրամեակին եւ անոր բեղուն պատմութեան:

### Կայացաւ Լրագրողների Համահայկական 9-րդ Համաժողովը

Շարունակուած էջ 13-էն

տանքային խմբի անունից շնորհակալութիւն յայտնեց համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար եւ նշեց, որ համաժողովը եւս մէկ հանգրուան հանդիսացաւ համահայկական միասնական տեղեկատուական հարթակ ստեղծելու ճանապարհին:

Յունիսի 1-ին համաժողովի մասնակիցները հանդիպեցին Կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի հետ: Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ Արայիկ Յարութիւնեանը նշեց, որ կարեւորում է սփիւռքահայ լրագրողներին հետ նման ձեւաչափով հանդիպումը, քանի որ նրանց շնորհիւ են նաեւ ուղերձներ փոխանցուած Սփիւռքի հայ համայնքներին: Կրթութեան եւ գիտութեան նախարարն ընդգծեց, որ թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ կրթական ոլորտի բարեփոխումներն առաջնային են, եւ առկայ է քաղաքական կամք՝ լուծելու եւ՝ այժմէական, եւ՝ ուղղակի արական մտեցում պահանջող խնդիրները: Այնուհետեւ նա պատասխանել է ներկաներին հարցերին:

Նոյն օրը՝ Երեկոյեան, համաժո-

ղովի մասնակիցները հանդիպեցին Արտաքին գործերի նախարար Զօհրապ Մնացականեանի հետ: Ողջունելով սփիւռքահայ լրագրողներին՝ նախարար Մնացականեանն ընդգծել է, որ արտերկրի հայ լրատուամիջոցները մեծ ներդրում ունեն Հայրենիք-Սփիւռք կապերի ապրապնդման գործում: Նախարարը շեշտեց նման ձեւաչափով հանդիպումների կարեւորութիւնը, որոնք լաւ հարաբերութիւն են ընձեռում արտերկրում բնակուող հայրենակիցներին Հայաստանի արտաքին քաղաքականութեան մասին տեղեկացնելու առումով: ԱԳՆ ղեկավարը լրագրողներին ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւնները՝ նշելով միջազգային օրակարգի խնդիրների վերաբերեալ Հայաստանի մօտեցումները, մանրամասն անդրադարձ կատարեց դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման գործընթացին, ներքաղաքական վերջին զարգացումներին: Զօհրապ Մնացականեանը պատասխանեց լրագրողների բազմաթիւ հարցերին, որոնք վերաբերում էին նոր պայմաններում Հայաստանի կողմից վարուող արտաքին քաղաքականութեանը:

**HARRY THE HANDYMAN SERVICES**

**Air Conditioning Repair  
Plumbing & Roofing  
Water & Gas Pipes • Fencing & Painting  
Iron Work Repair • Electrical Job**

Email: haroutig007@gmail.com

**Dependable • Reliable • Fast Work**

**CALL HARRY**

**818.219.3314**

**SEROP'S CAFE**

**GREEK & LEBANESE FOOD**

SERVING BATON ROUGE SINCE 1979



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ  
1918-2018

# ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Կիրակի, Յունիս 24, 2018  
Երեկոյեան ժամը 7ին

PASADENA CITY COLLEGE / SEXSON AUDITORIUM  
1570 E Colorado Blvd, Pasadena, CA 91106

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝  
Գագիկ Բաղալեանի  
Սալբի Մայիլեանի  
Յարուք Յակոբեանի  
Համազգայինի «Անի» Պարախուների  
«Զուլարթնոց» Պարախուների  
Համազգայինի «Սայաթ Նովա» Երգչախումբի  
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ

